Հոդված 121. ~~Հոդված 122.~~ Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը

1. Հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Գույքի բռնագրավումը կարող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի նկատմամբ:

3. Դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ սույն հոդվածով նախատեսված հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան բռնագրավելու համար:

4. Եթե հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, պատկանում է բարեխիղճ երրորդ անձի կամ այն չի հայտնաբերվել, ապա բռնագրավման է ենթակա համարժեք գույք:

5. Հանցանքը կատարելու համար օգտագործված կամ շրջանառությունից հանված հանցագործության գործիքները կամ միջոցները, ինչպես նաև հանցագործության առարկա հանդիսացող իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները ենթակա են պարտադիր բռնագրավման, բացառությամբ այն դեպքի, երբ դրանց բռնագրավումն ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը:

6. Շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում է այն պատկանում:

7. Բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, տուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: Եթե բռնագրավման ենթակա գույքը ծանրաբեռնված է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներով, այդպիսի իրավունքները պահպանվում են բռնագրավումից հետո:

8. Եթե տուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագրավման ենթակա գույքի վերաբերյալ, այդ գույքի բռնագրավումը կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

9. Համաձայնեցման և համագործակցության վարույթների կիրառման դեպքում սույն հոդվածով սահմանված կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագրավման ենթակա գույքի կամ դրա չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասի: Բանակցությունների արդյունքում համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից:

10. Սույն հոդվածի իմաստով գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական

(դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

11. Սույն հոդվածի իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանդիսանում է հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել նրա տիրապետությունից կամ որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով:

~~Հանցագործության գործիքների, միջոցների, առարկաների կամ հանցավոր ճանապարհով ստացված գույքի կամ եկամտի բռնագրավումը~~

~~1. Հանցագործության գործիքները, միջոցները, առարկաները կամ հանցավոր ճանապարհով ստացված ստացված գույքը կամ եկամուտը՝ սույն հոդվածով նախատեսված կարգով՝ դատական ակտով ենթակա են պարտադիր բռնագրավման:~~

~~2. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի կամ եկամտի բռնագրավումը հանցագործությամբ ստացված եկամուտը, գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը անհատույց վերցնելն է:~~

~~3. Հանցագործության գործիքները, միջոցները, առարկաները կամ հանցավոր ճանապարհով ստացված գույքը կամ եկամուտը չհայտնաբերելու դեպքում բռնագրավման է ենթակա համարժեք գույք:~~

~~4. Սույն հոդվածի իմաստով գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:~~

~~5. Հանցագործության գործիքների կամ միջոցների բռնագրավումը այն առարկաները (գույքը) անհատույց վերցնելն է, որոնք օգտագործվել են կամ նախատեսվում են օգտագործել հանցանքը դիտավորությամբ կատարելու համար: Բռնագրավման են ենթակա նաև անզգուշությամբ կատարված հանցանքի գործիք կամ միջոց հանդիսացած այն առարկաները (գույքը), որոնք~~

~~հանված են ազատ շրջանառությունից կամ որոնց շրջանառությունն արգելված է:~~

~~6. Հանցագործության առարկաների բռնագրավումը այն իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները անհատույց վերցնելն է, որոնց շրջանառությունն արգելված է կամ որոնք օգտագործվել են հանցագործության մեջ, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

~~7. Բռնագրավված այն գույքը, որի շրջանառությունը արգելված է Հայաստանի Հանրապետության տարածքում ենթակա է ոչնչացման: Բռնագրավման ենթարկված և սահմանափակ շրջանառություն ունեցող գույքը տրամադրվում է այն իրավասու մարմիններին, որոնք այդ գույքի շրջանառության իրավունք ունեն:~~

~~8. Բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի, տուժողի գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը:~~

~~9. Սույն հոդվածի իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որի գույքը իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել նրա տիրապետությունից կամ ով գույքը հանձնել է այլ անձի և հանձնելիս չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով, ինչպես նաև այն անձը, ով ձեռք է բերել գույք, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը ստացվել է հանցագործության միջոցով:~~

ԲԱԺԻՆ 7.
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 20 .

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 122. Քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձինք

1. Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության է ենթակա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձը:

2. Քրեական պատասխանատվության ենթակա չեն պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց հիմնարկները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը քրեական օրենքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

4. Օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե հանցագործությունը ուղղված է եղել Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի կամ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավաբանական անձի կամ այլ կազմակերպության շահերի դեմ և եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

5. Իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել մեկից ավելի քրեաիրավական ներգործության միջոցներ:

6. Իրավաբանական անձը պատասխանատվության է ենթարկվում սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն բաժնում նախատեսված կանոնները:

Հոդված 123. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքը

1. Իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

1) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, ինչը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,

3) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով իրավաբանական անձին ներկայացնող անձ է համարվում օրենքի, այլ իրավական ակտի, պայմանագրի, կանոնադրության, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա իրավաբանական անձին ներկայացնելու լիազորություն ունեցողը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող է համարվում այն անձը, որը կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի իրավաբանական անձի համար տալ պարտադիր ցուցումներ կամ այլ ձևով ներգործել իրավաբանական անձի գործունեության կամ կայացվող որոշումների վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակների մեջ է եղել իրավաբանական անձի համար գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում՝ եկամուտն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը:

5. Ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Հոդված 124. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառելը

1. Իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցների, բաժնետերերի կամ փայատերերի կողմից ձեռնարկվել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները սույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

Հոդված 125. Իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը

1. Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից սույն օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված հիմքերով այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են իրավաբանական անձի նկատմամբ:

2. Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաև այն դեպքում, երբ վերացրել է հանցանքի

կատարմանը նպաստող պատճառները և պայմանները, եթե այդպիսիք առկա են, հատուցել է պատճառած վնասը և հարթել է ենթադրյալ հանցագործության այլ հետևանքները, վերադարձրել է հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ստացված եկամուտը:

3. Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաև սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

ԳԼՈՒԽ 21 .
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 126. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների համակարգը

1. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցներն են՝

1) տուգանքը,

2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը,

3) հարկադիր լուծարումը,

4) Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

2. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում չեն նախատեսվում և նշանակվում են՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցների տեսակներն ու չափերը:

Հոդված 127. Իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցները նշանակելիս հաշվի առնվող հանգամանքները

1. Իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող քրեաիրավական ներգործության միջոցի տեսակն ու չափը որոշելիս հաշվի են առնվում կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, հանցագործության հետևանքների չեզոքացմանն ուղղված իրավաբանական անձի ձեռնարկած միջոցները, սույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց գործողությունները, իրավաբանական անձի բարեխիղճ մասնակիցների, բաժնետերերի կամ փայատերերի օրինական շահերը, որոնք չգիտեին և չէին կարող իմանալ կատարվող կամ կատարված հանցանքի մասին, իրավաբանական անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում՝ ֆինանսական շուկայում ունեցած դերը, ինչպես նաև դատվածությունը:

2. Եթե իրավաբանական անձի նկատմամբ նույն փաստի առթիվ նախկինում արդեն իսկ կիրառված է եղել գույքային բնույթի ոչ քրեաիրավական ներգործության միջոց, ապա տուգանքի նշանակման հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում դրա բնույթն ու խստության աստիճանը:

3. Քրեաիրավական ներգործության միջոցները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ նշանակելիս դատարանը, ֆինանսական համակարգի կայունության և ֆինանսական գործունեության ապահովման ռիսկերի գնահատման համար, հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից քրեաիրավական ներգործության տվյալ միջոցի կիրառման և դրա հետևանքների մասին տրամադրած կարծիքը:

Հոդված 128. Տուգանքը

1. Տուգանքի չափը և այն նշանակելու հնարավորությունը դատարանը որոշում է հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, հանցագործությամբ ստացված գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտները, իրավաբանական անձի գույքային դրությունը, իրավաբանական անձի՝ եկամուտ ստանալու հնարավորությունը, կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Տուգանքի չափը պետք է համաչափ լինի հանցագործության ծանրությանը և չի կարող գերազանցել հանցանքն ավարտելուն նախորդած 1 տարվա ընթացքում իրավաբանական անձի համախառն եկամտի 20 տոկոսը:

2. Տուգանքի չափը չի կարող այնպիսին լինել, որն ուղղակիորեն կհանգեցնի իրավաբանական անձի սնանկացման կամ լուծարման:

3. Եթե իրավաբանական անձն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում՝ առավելագույնը 3 տարի, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Եթե տուգանքը նշանակելուց հետո իրավաբանական անձի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից, դատարանը, իրավաբանական անձի միջնորդության հիման վրա, կարող է երկարաձգել տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 3 տարով:

4. Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում դատարանը բռնագանձում է տուգանքի չափին համարժեք գույք՝ դրա առկայության դեպքում: Բռնագանձման ենթակա գույքի բացակայության դեպքում դատարանը տուգանքը փոխարինում է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցմամբ՝ սույն օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված ժամկետներով:

5. Տուգանքի կիրառմամբ պետական բյուջեում գոյացած միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի պետության կողմից կարող են իրականացվել հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցմանն ուղղված սոցիալական ծրագրեր: Հանցագործությամբ տուժողներին

պատճառված վնասի փոխհատուցման սկզբունքները, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 129. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը

1. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը՝ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական, կամ այլ գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու արգելքն է՝ 2 ամսից մինչև 2 տարի ժամկետով:

2. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է գործունեության այն տեսակի կապակցությամբ, որի իրականացման ընթացքում կատարվել է հանցանքը կամ որի իրականացման հետ կապված է եղել հանցագործությունը: Եթե հանցագործությունը կապված է եղել գործունեության մի քանի տեսակների հետ, ապա դատարանը ժամանակավոր դադարեցնում է գործունեության այն տեսակով զբաղվելու իրավունքը, որն անմիջականորեն կապված է եղել հանցանքի կատարման հետ:

3. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է, եթե դա ուղղակիորեն չի հանգեցնի իրավաբանական անձի սնանկացման:

4. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումից խուսափելու դեպքում այն փոխարինվում է հարկադիր լուծարմամբ:

5. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը չի կարող նշանակվել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Հոդված 130. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձանց նկատմամբ, որն իր գործունեությունն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար:

Հոդված 131. Հարկադիր լուծարումը

1. Հարկադիր լուծարումը բացառիկ քրեաիրավական ներգործության միջոց է, որն իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է առանձնապես ծանր հանցանքի համար՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ու պատճառված վնասի բնույթն ու չափը, դատվածության առկայությունը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, որոնք վկայում են տվյալ իրավաբանական անձի հետագա գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին:

2. Հարկադիր լուծարումը չի կարող նշանակվել օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձի, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Հոդված 132. Իրավաբանական անձի դատվածությունը

1. Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է՝

1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 1 տարի հետո,

2) միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 2 տարի հետո,

3) ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 3 տարի հետո,

4) առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում, եթե չի նշանակվել հարկադիր լուծարում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 5 տարի հետո:

2. Դատվածության մարման ժամկետի ընթացքում սույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով նոր հանցանք կատարելու դեպքում դատվածության մարման ժամկետն ընդհատվում է և սկսվում է հաշվվել նոր հանցագործության համար նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց հետո:

~~Հոդված 123. Քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձինք~~

1. Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության են ենթակա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը, միջազգային կազմակերպությունը, ընկերությունը, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձը կամ օտարերկրյա կազմակերպությունը կամ ընկերությունը:

2. Քրեական պատասխանատվության ենթակա չեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, Կենտրոնական բանկը:

3. Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությամբ օժտված միջազգային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է քրեական պատասխանատվության, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով զրկվում է նշված անձեռնմխելիությունից:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված իրավաբանական անձը սույն օրենսգրքով պաշտպանվող շահերի դեմ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

5. Միջազգային կազմակերպությունը, ընկերությունը, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձը կամ դրանց առանձնացված ստորաբաժանումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե հանցագործությունը ուղղված է եղել Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կամ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավաբանական անձի կամ այլ կազմակերպության շահերի դեմ և եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

6. Իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել մեկից ավելի քրեաիրավական ներգործության միջոցներ:

Հոդված 124. Հանցանքները, որոնց համար իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության

1.Իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի 8-րդ բաժնի 22-րդ գլխի 137-153-րդ հոդվածներով, 9-րդ բաժնի 25-րդ գլխի 179-183-րդ հոդվածով, գլուխ 26-ի հոդվածներ 184-185-ով, գլուխ 28-ի հոդվածներ 198-206-ով, 211-216-ով, 219-221-ով, գլուխ 29-ի հոդվածներ 225-229-ով, Բաժին 10-ի գլուխ 30-ի հոդվածներ 240-242-ով, գլուխ

~~31-ի 243-245-ով, 247-248-ով, գլուխ 32-ի հոդվածներ 252-262, 264-ով, 266-281-ով, բաժին 11-ի գլուխ 33-ի հոդվածներ 286-289, բաժին 12-ի գլուխ 34-ի հոդվածներ 294-306-ով, 312-313-ով գլուխ 35-ի հոդվածներ 316-ով, 318-322-ով, գլուխ 36-ի հոդվածներ 327-ով, 328-ով, 331-333-ով, գլուխ 37-ի հոդվածներ 337-344-ով, գլուխ 38-ի հոդվածներ 345-351-ով, գլուխ 39-ի հոդվածներ 352-378-ով, բաժին 13-ի գլուխ 40-ի հոդվածներ 379-382-ով, 383-386-ով, 390-391-ով, գլուխ 41-ի հոդվածներ 393-399-ով, բաժին 14-ի գլուխ 42-ի հոդվածներ 400-412-ով, գլուխ 43-ի հոդվածներ 413-418-ով, 426-427-ով, գլուխ 44-ի հոդվածներ 428-ով, 433-434-ով, 445-ով, 451-ով, գլուխ 45-ի հոդվածներ, 452-454-ով, 462-464-ով, 466-472, 473-475-ով նախատեսված հանցանքների համար։~~

~~Հոդված 125. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքը~~

~~1. Իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե սույն օրենսգրքի 124-րդ հոդվածով նախատեսված~~

~~1) հանցանքը կատարվել է այն ֆիզիկական անձի արարքով, որը օրենքի, այլ իրավական ակտի, պայմանագրի, կանոնադրության, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա լիազորված է ներկայացնելու իրավաբանական անձին կամ գործելու նրա անունից և հանցանքը կատարել է այդ լիազորությունն իրականացնելով, եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ ղեկավարի գիտությամբ, թողտվությամբ կամ դրդմամբ՝ ի շահ իրավաբանական անձի,~~

~~2) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի ծառայողի կողմից՝ կապված իր ծառայողական գործունեության հետ, եթե հանցանքի կատարումը հնարավոր է դարձել տվյալ կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների բացակայության կամ դրանց անկատարության հետևանքով,~~

~~3) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի՝ այն անձի կողմից, որը մասնակցություն ունի նշված կազմակերպության կառավարման կամ վերահսկող մարմիններում,~~

~~4) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի ՝ այն անձի կողմից, որը օրենքի կամ այլ իրավական ակտի, պայմանագրի ուժով, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա կամ տվյալ կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի նշված կազմակերպության համար պարտադիր ցուցումներ տալու կամ այլ ձևով ազդելու կազմակերպության գործունեության կամ դրա որոշումների վրա կամ~~

~~5) հանցանքը կատարվել է այլ անձի կողմից՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված անձի գիտությամբ կամ դրդմամբ՝ ի շահ նշված կազմակերպության։~~

2. Հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակների մեջ է եղել նշված կազմակերպության համար գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում՝ եկամուտն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը:

3. Ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը:

Հոդված 126. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառելը

1. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի 125-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

2. Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է նաև այն դեպքում,երբ նա լուծարվել է նախքան քրեական հետապնդումը կամ օրենքով սահմանված կարգով դադարեցրել է իր գործունեությունը:

Հոդված 127. Իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը

1.Իրավաբանական անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե՝

1) սույն օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված անձինք կամովին հրաժարվել են հանցանքը կատարելուց,

2) սույն օրենսգրքի 125-րդ հոդվածի 1--5-րդ կետերում նշված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձինք գործուն զղջացել են կամ հաշտվել են տուժողի հետ,

3) անցել են սույն օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները:

ԳԼՈՒԽ 21. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 128. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների համակարգը

1. Իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ քրեաիրավական ներգործության միջոցները՝

1) տուգանքը,

2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը,

3) պետական գնումներին մասնակցելու արգելքը,

4) հարկադիր լուծարումը, կամ

5) Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

2. Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում չեն նախատեսվում և նշանակվում են՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցների տեսակներն ու չափը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցը չի կարող կիրառվել այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ նույն փաստի առթիվ նախկինում արդեն իսկ կիրառված է եղել տուգանքը որպես ոչ քրեաիրավական ներգործության միջոց:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցները բանկի նկատմամբ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից քրեաիրավական ներգործության տվյալ միջոցի կիրառման և դրա հետևանքների մասին տրամադրած կարծիքը:

Հոդված 129. Տուգանքը

1. Տուգանքը նշանակվում է իրավաբանական անձի նկատմամբ՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար՝ հանցանքն ավարտվելուն նախորդած մեկ տարվա նրա եկամուտների տասից քսան տոկոսի չափով:

2. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար իրավաբանական անձի նկատմամբ տուգանքը նշանակվում է հանցանքն ավարտվելուն նախորդած մեկ տարվա նրա համախառն եկամուտի քսանից քառասուն տոկոսի չափով:

3. Եթե իրավաբանական անձը հանցանքն ավարտելուն նախորդած մեկ տարվա ընթացքում եկամուտ չի ունեցել կամ հնարավոր չի եղել պարզելու նրա եկամուտը, ապա տուգանքի հաշվարկը կատարվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Այս դեպքում ոչ մեծ կամ միջին հանցագործության համար սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված տուգանքի չափերը եռապատկվում են: Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար նշանակվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկից երեքհարյուրապատիկի չափով տուգանք:

4. Տուգանքի չափը և այն նշանակելու հնարավորությունը դատարանը որոշում է հաշվի առնելով իրավաբանական անձի գույքային դրությունը, իրավաբանական անձի՝ եկամուտ ստանալու հնարավորությունը,

~~կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ինչպես նաև սույն օրենսգրքի 134-րդ հոդվածով նշված հանգամանքները:~~

~~5. Տուգանք չափը չի կարող այնպիսին լինել, որը կարող է հանգեցնել իրավաբանական անձի սնանկության կամ գործունեության դադարեցման:~~

~~6. Տուգանքի կիրառմամբ գոյացած միջոցների հիսուն տոկոսն ուղղվում է հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման պետական հիմնադրամ: Այդ հիմնադրամից փոխհատուցում է կատարվում, եթե հանցագործությամբ պատճառված վնասը հարկադիր կարգով չի հատուցվել:~~

~~7. Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցմամբ՝ սույն օրենգրքի 130-րդ հոդվածով նախատեսված ժամկետներով:~~

~~Հոդված 130. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը~~

~~1. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը՝ ձեռնարկատիրական, տնտեսական կամ այլ գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու արգելքն է՝ վեց ամսից մինչև երկու տարի ժամկետով:~~

~~2. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է գործունեության այն տեսակի կապակցությամբ, որի իրականացման ընթացքում կատարվել է հանցանքը կամ որի իրականացման հետ կապված է եղել հանցագործությունը:~~

~~3. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է, եթե դա չի հանգեցնելու իրավաբանական անձի լուծարման:~~

~~4. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումից խուսափելու դեպքում այն փոխարինվում է հարկադիր լուծարմամբ:~~

~~5. Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը չի կարող նշանակվել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:~~

~~Հոդված 131. Պետական գնումներին մասնակցելու արգելք~~

1.Պետական գնումներին մասնակցելու արգելքը առավելագույնը երեք տարի ժամկետով արգելելն է մասնակցելու պետական գնումներին:

Հոդված 132. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն միջազգային կազմակերպության, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձի կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների նկատմամբ, որոնց միջոցով այդ կազմակերպությունները իրենց գործունեությունն են իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար:

Հոդված 133. Հարկադիր լուծարումը

1. Հարկադիր լուծարումը բացառիկ քրեաիրավական ներգործության միջոց է, որը իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է առանձնապես ծանր հանցագործության համար՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ու պատճառված վնասի բնույթն ու չափը, դատվածության առկայությունը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, որոնք վկայում են տվյալ իրավաբանական անձի հետագա գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին:

2. Լուծարված իրավաբանական անձի գույքի ճակատագիրը որոշվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Հարկադիր լուծարումը չի կարող նշանակվել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Հոդված 134. Իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցները նշանակելիս հաշվի առնվող հանգամանքները

1.Իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող քրեաիրավական ներգործության միջոցի տեսակն ու չափը որոշելիս հաշվի են առնվում կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, հանցագործության վնասակար հետևանքների չեզոքացմանն ուղղված իրավաբանական անձի գործունեությունը, իրավաբանական անձը բնութագրող

~~հանգամանքները, այդ թվում՝ բարեգործական կամ այլ հանրօգուտ գործունեությունը, դատվածությունը:~~

~~Հոդված 135. Իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հետ կապված սահմանափակումներն ու արգելքները~~

~~1. Քրեական հետապնդումը սկսելու պահից մինչև իրավաբանական անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելը և քրեաիրավական ներգործության միջոցը լրիվ կատարելը կամ արդարացման դատավճիռ կայացնելը իրավաբանական անձի կամավոր լուծարումը, սնանկացումը կամ վերակազմակերպումը արգելվում է:~~

~~Հոդված 136. Իրավաբանական անձի դատվածությունը~~

~~1. Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է՝~~

~~1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետըլրանալուց մեկ տարի հետո,~~

~~2) միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց երկու տարի հետո,~~

~~3) ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց երեք տարի հետո,~~

~~4) առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում, եթե չի նշանակվել հարկադիր լուծարում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց հինգ տարի հետո:~~

~~2. Դատվածության մարման ժամկետի ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում դատվածության մարման ժամկետն ընդհատվում է և սկսվում է հաշվվել նոր հանցագործության համար նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց հետո:~~

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 8.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 22 .

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 133. Ցեղասպանությունը

1. Ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս կամ հոգեկան լուրջ խեղում պատճառելը, կամ այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանն ուղղված կյանքի պայմաններ ստեղծելը, այդ թվում՝ բռնությամբ տեղահանելը, այդ խմբում մանկածնությունը կանխելուն ուղղված միջոցներ իրականացնելը կամ այդ խմբի երեխաներին մարդկային այդ խմբից այլ խմբի հարկադրաբար փոխանցելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասնվեցից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

Հոդված 134. Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը

1. Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կամ

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

Հոդված 135. Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները

1. Քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակման շրջանակներում հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) սպանությունը,

2) բնաջնջումը,

3) ստրկացումը,

4) բնակչության բռնագաղթը կամ բռնի տեղահանումը,

5) ազատությունից զրկելը՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ,

6) խոշտանգումը,

7) սեքսուալ բնույթի բռնի գործողությունը, սեքսուալ ստրկացումը, պոռնկության հարկադրումը, հարկադրական հղիացումը կամ ամլացումը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրումը,

8) նույնականացվող ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդումը՝ պայմանավորված քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկ, մշակութային, կրոնական կամ սեռային պատկանելիությամբ կամ միջազգային իրավունքով համընդհանրորեն անընդունելի ճանաչված այլ հիմքով,

9) մարդկանց բռնի անհետացումը,

10) ապարտեիդը,

11) համարժեք այլ անմարդկային արարքը, որը պատճառել է մարդու առողջությանը ծանր վնաս կամ ուժեղ տառապանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում օգտագործված հետևյալ հասկացությունները ունեն ստորև նշված իմաստը՝

1) քաղաքացիական անձանց դեմ ուղղված հարձակում՝ քաղաքացիական անձանց դեմ ուղղված՝ սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված արարքների բազմակի կատարում, որոնք ձեռնարկվում են պետության կամ կազմակերպության՝ նման հարձակում իրականացնելուն ուղղված քաղաքականություն վարելու կամ այդ քաղաքականությանն աջակցելու նպատակով,

2) բնաջնջում՝ կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ուղղված են բնակչության լրիվ կամ մասնակի ոչնչացմանը,

3) ստրկացում՝ անձի՝ որպես սեփականության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի որևէ կամ բոլոր ձևերի իրականացումը, այդ թվում՝ նույն արարքը, որը կատարվել է մարդու թրաֆիքինգի շրջանակներում,

4) բնակչության բռնագաղթ կամ բռնի տեղահանում՝ արտաքսման կամ այլ հարկադիր գործողությունների միջոցով անձանց բռնի տեղափոխությունն իրենց

օրինական բնակության տարածքից՝ առանց միջազգային իրավունքով նախատեսված հիմքերի,

5) խոշտանգում՝ ազատությունից զրկված կամ հանցավորի վերահսկողության տակ գտնվող անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը,

6) հարկադրական հղիացում՝ ազգաբնակչության էթնիկական կազմը փոխելու կամ միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ կատարելու նպատակով հարկադրաբար հղիացված կնոջն ազատությունից ապօրինի զրկելը,

7) հետապնդում՝ որոշակի խմբին կամ հանրույթին պատկանելու հիմքով միջազգային իրավունքի խախտմամբ հիմնարար իրավունքներից զրկելը,

8) մարդկանց բռնի անհետացում՝ մարդկանց ձերբակալում, կալանավորում կամ առևանգում՝ պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ՝ չընդունելով դա իբրև ազատազրկում կամ հրաժարվելով այդ մարդկանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություն տալուց՝ երկար ժամանակով նրանց օրենքով պաշտպանվելու հնարավորությունից զրկելու համար,

9) ապարտեիդ՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքներին համարժեք անմարդկային արարքներ, որոնք կատարվել են ռասայական մի խմբի կողմից ռասայական մեկ այլ խմբի կամ խմբերի նկատմամբ կանոնավոր ճնշման և գերիշխելու ինստիտուցիոնալացված ռեժիմի համատեքստում՝ այդ ռեժիմի պահպանման նպատակով:

Հոդված 136. Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը

1. Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելիության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 137. Հովանավորվող անձի դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձի կամ միջազգային իրավունքով պաշտպանությունից օգտվող այլ անձի հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը,

2) առանց անձի նկատմամբ արդար դատաքննության իրականացման՝ պատիժ նշանակելը կամ կատարելը կամ

3) պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) սպանությունը,

2) խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, ապօրինաբար բժշկական, կենսաբանական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը, մարմնի մաս կամ հյուսվածք հեռացնելը կամ նրանց նկատմամբ փոխպատվաստման վիրահատություն իրականացնելը,

3) առողջությանը ծանր վնաս կամ ուժեղ տառապանք պատճառելը կամ անձի առողջական վիճակից ելնելով անձին բժշկական օգնություն տրամադրելու անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ բժշկական կամ այլ միջամտության արդյունքում ֆիզիկական խեղում պատճառելը,

4) սեքսուալ բնույթի բռնի գործողությունը, սեքսուալ ստրկացումը, պոռնկության հարկադրումը, հարկադրական հղիացումը կամ ամլացումը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրումը,

5) ստրկացնելը,

6) պատանդ վերցնելը կամ պահելը,

7) մինչև 18 տարեկան երեխաներին զինված ուժեր զինվորական ծառայության զորակոչելը կամ հավաքագրելը, կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը, կամ

8) անօրինական բռնագաղթը, տեղափոխումը, բռնի անհետացումը կամ այլ ձևով ազատությունից զրկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

3. Միջազգային զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը՝

1) սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց հակառակորդ պետության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը կամ

2) ռազմական գործողություններն ավարտելուց հետո ռազմագերու կամ քաղաքացիական անձի հայրենադարձությանը խոչընդոտելը կամ չհիմնավորված ձգձգելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

4. Սույն հոդվածի իմաստով հովանավորվող անձինք են համարվում՝

1) միջազգային զինված ընդհարման առնչությամբ 1949 թվականի Ժնևի կոնվենցիաներում կամ Առաջին լրացուցիչ արձանագրությամբ հովանավորվող անձինք, մասնավորապես, վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները, ռազմագերիները և քաղաքացիական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով զինված ընդհարման ժամանակ միջազգային պաշտպանությունից օգտվող այլ անձինք,

2) միջազգային բնույթ չկրող ընդհարման առնչությամբ վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող անձինք, որոնք գտնվում են հակառակորդի վերահսկողության ներքո,

3) հակառակորդի զինված ուժերի անդամները կամ կոմբատանտները, որոնք վայր են դրել զենքը կամ զրկված են պաշտպանության որևէ հնարավորությունից:

Հոդված 138. Սեփականության կամ այլ իրավունքների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդի գույքն ապօրինի, կամայական, խոշոր չափերով ոչնչացնելը կամ վստահված գույքը հափշտակելը, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, կամ միջազգային զինված ընդհարման ժամանակ դատարանում հակառակորդ կողմի քաղաքացիների

իրավունքները կամ հայցերը չեղարկված, կասեցված կամ անընդունելի հայտարարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 139. Մարդասիրական օգնության ցուցաբերման կամ տարբերանշանների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) մարդասիրական օգնության ցուցաբերման աշխատանքներում կամ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան խաղաղության պահպանման առաքելությունում ներգրավված անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների վրա հարձակվելը, քանի դեռ նրանք (դրանք) օգտվում են միջազգային մարդասիրական իրավունքով քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներին տրամադրվող պաշտպանության իրավունքից կամ

2) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով պաշտպանություն նախատեսող, տարբերանշաններ կրող շենքերի, նյութերի, բժշկական հաստատությունների, փոխադրամիջոցների կամ դրանց անձնակազմի վրա հարձակվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ Կարմիր խաչի, Կարմիր մահիկի կամ Կարմիր բյուրեղի տարբերանշանները, բանագնացի դրոշը կամ հակառակորդ կամ չեզոք պետության զինված ուժերի դրոշը, համազգեստը կամ պետական տարբերանշանները կամ պետական դրոշը կամ Միավորված ազգերի կազմակերպության համազգեստը, զինվորական տարբերանշանները, դրոշը կամ մշակութային արժեքների պաշտպանության համար նախատեսված տարբերանշանները կամ միջազգային իրավունքով պահպանվող այլ տարբերանշաններն ապօրինի օգտագործելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 140. Պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչության կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց կամ ռազմական գործողություններին անմիջական մասնակցությունը հանցավորի համար ակնհայտորեն դադարեցրած անձի վրա հարձակումը,

2) քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ կրոնական, կրթության, արվեստի, գիտության կամ բարեգործության նպատակների համար նախատեսված շենքերի, պատմական հուշարձանների, բժշկական հաստատությունների, հիվանդների կամ վիրավորների կենտրոնացման վայրերի կամ չպաշտպանվող տարածքների կամ ապառազմականացված գոտիների կամ չպաշտպանվող կամ ռազմական օբյեկտ չհանդիսացող այլ բնակավայրերի կամ շենքերի կամ շինությունների վրա հարձակումը,

3) հարձակումը, եթե ակնհայտ է, որ այն կհանգեցնի քաղաքացիական անձանց պատահական մահվան կամ խեղման կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, կամ լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս կպատճառի շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ, կամ

4) վտանգավոր ուժեր պարունակող կառույցների և սարքերի վրա հարձակվելը, եթե ակնհայտ է, որ այդպիսի հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների կամ վիրավորումների քաղաքացիական անձանց շրջանում կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին կամ շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

2. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչությանը սովի մատնելը՝ իբրև պատերազմ վարելու եղանակ, նրանց զրկելով գոյատևելու համար անհրաժեշտ միջոցներից, ներառյալ վերաբերելի միջազգային փաստաթղթերով նախատեսված օգնություն տրամադրելուն խոչընդոտելը,

2) ոչ ոքի կենդանի չթողնելու հրաման տալը կամ նման հրամանով սպառնալը,

3) 137-րդ հոդվածի 4-րդ մասում նշված հովանավորվող անձանց ներկայության օգտագործումը՝ որոշակի վայրեր, տարածքներ կամ զինված ուժեր ռազմական գործողություններից անձեռնմխելի դարձնելու համար,

4) բռնազավթող պետության կողմից իր սեփական քաղաքացիական բնակչության մի մասի վերաբնակեցումը բռնազավթված տարածքում, կամ

բռնազավթած տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի տեղահանումը կամ տեղափոխումը բռնազավթված տարածքի սահմաններում կամ դրանից դուրս,

5) հատուկ պաշտպանության տակ գտնվող, հստակ տարորոշված, ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքները հարձակման օբյեկտ դարձնելը և հարձակման հետևանքով դրանց խոշոր չափի վնաս պատճառելը, եթե դրանք չեն գտնվում ռազմական օբյեկտների անմիջական հարևանությամբ, և եթե տվյալներ չկան այդ պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքները հակառակորդի կողմից ռազմական գործողություններին նպաստելու համար օգտագործելու մասին, կամ

6) ավելորդ վնասվածք առաջացնող կամ ավելորդ տառապանք պատճառող կամ իրենց բնույթով ոչ ընտրական համարվող պատերազմ վարելու եղանակների կիրառումը՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանով, որ այդպիսի եղանակները համապարփակ արգելքի առարկա են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

4. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդ պետության զինված ուժերի անդամի կամ հակառակորդի կոմբատանտի ուխտադրույժ սպանությունը կամ վիրավորումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 141. Պատերազմ վարելու արգելված միջոցների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) թույնի կամ թունավոր զենքի կիրառումը,

2) հեղձուցիչ, թունավոր կամ այլ գազերի կամ նմանատիպ այլ հեղուկների, նյութերի կամ միջոցների կիրառումը,

3) մարդու մարմնում հեշտ պայթող կամ սեղմվող փամփուշտների կիրառումը, այդ թվում՝ պատյանային փամփուշտների կիրառումը, որոնց կոշտ պատյանը չի ծածկում ամբողջ միջուկը, կամ որոնք կտրվածքներ ունեն, կամ

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով

Հոդված 500. Նոտարի մոտ կեղծ երդում տալը

1. Դատարան կամ պետական այլ մարմին ներկայացնելու նպատակով նոտարի մոտ արված բանավոր հայտարարությունը ճշմարտացի լինելու վերաբերյալ կեղծ երդում տալը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար, եթե իր բանավոր հայտարարության ճշմարտացի չլինելը որևէ նշանակություն չէր կարող ունենալ դատարանում կամ պետական այլ մարմնում:

Հոդված 501. Ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձանց սպանության, առողջությանը վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը

1. Ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձի սպանության, առողջությանը վնաս պատճառելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը, որը կապված է կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տալու հետ, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են համարվում հաղորդում տվող անձի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:

~~Հոդված 467.~~ Հոդված 502. Ազդարարի տվյալների ապօրինի հրապարակումը

1. Ազդարարի տվյալի~~տվյալների~~ ապօրինի հրապարակումն այն անձի կողմից, որին այդ տվյալը~~տեղեկությունները~~ վստահվել կամ հայտնի է~~են~~ դարձել նրա ծառայողական գործունեության կապակցությամբ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու~~հինգ~~ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

~~Հոդված 468.~~ Հոդված 503. Ցուցմունք, եզրակացություն կամ կարծիք տալուց կամ թարգմանություն կատարելուց հրաժարվելը

1. Վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց ապօրինի հրաժարվելը, փորձագետի կողմից առանց հարգելի պատճառների եզրակացություն կամ կարծիք տալուց հրաժարվելը կամ թարգմանի կողմից առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելը՝ դրա համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ~~երեք~~ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին~~առաջին~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու~~երեք~~ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից~~առավելագույնը~~

երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու համար, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Հոդված 504. ~~Հոդված 469.~~ Սուտ ցուցմունք, ~~կամ~~ կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը

1. Քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալը կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալը կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը~~վարույթը~~՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի~~տասնապատիկի~~ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից ~~առավելագույնը երկու~~ հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ— կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին~~առաջին~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից~~առավելագույնը~~ հինգ տարի ժամկետով:

3. Սուտ ~~ցուցմունք,~~ բացատրություն, ցուցմունք կամ կեղծ եզրակացություն կամ կարծիք տված կամ սխալ թարգմանություն կատարած անձն~~անձը~~ ազատվում է սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունից, եթե նա~~,~~ հիմնական գործի ~~դատական քննության կամ~~ մինչդատական վարույթի կամ դատական քննության կամ վարչական վարույթի ընթացքում՝~~,~~ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, բացատրության, կեղծ եզրակացության կամ կարծիքի կամ սխալ թարգմանության մասին:

4. Սույն հոդվածի իմաստով հիմնական է համարվում քրեական, քաղաքացիական կամ վարչական այն գործը, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը, կեղծ եզրակացությունը կամ կարծիքը կամ կատարվել է սխալ թարգմանությունը:

Հոդված 505. ~~Հոդված 470.~~ Ուսումնասիրության ընթացքում կեղծ հայտարարագիր ներկայացնելը

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության մասին ծանուցված անձի կողմից իրավասու մարմնին ներկայացված հայտարարագրում կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տվյալ~~տվյալներ~~ ներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից ~~առավելագույնը երկու~~ հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ~~—~~ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Արգելանքի վերցված

Հոդված 506. ~~Հոդված 471. Ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված~~, ձերբակալված, ~~կամ~~ կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը

1. Արգելանքի վերցված~~Ազատազրկման հետ կապված պատժի դատապարտված~~, ձերբակալված, ~~կամ~~ կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Կարճաժամկետ մեկնման կամ պատժի հետաձգման ժամկետի ավարտից հետո ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելն այն անձի կողմից, որին թույլատրվել է ազատազրկման վայրից կարճաժամկետ մեկնում, կամ որի նկատմամբ դատավճռի կատարումը հետաձգվել է՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ~~առաջին~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

~~4~~3. Սույն հոդվածի 1-ին~~առաջին~~ կամ 2-րդ կամ 3-րդ~~երկրորդ~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) բռնություն գործադրելով կամ բռնությունդա գործադրելու սպառնալիքով կամ~~,~~

3) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ~~,~~ պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից~~երեքից~~ ութ տարի ժամկետով:

54. Փախուստ կատարած անձը փախուստ կատարելու համար ենթակա չէ ~~անձն ազատվում է~~ քրեական պատասխանատվության~~պատասխանատվությունից~~, եթե նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ռեաբիլիտացնող հիմքով, կամ նա արդարացվել է այն գործով, որով դատապարտվել էր ազատազրկման հետ կապված պատժի, կալանավորվել կամ ձերբակալվել էր:

~~Հոդված 507.~~ ~~Հոդված 472.~~ Դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը

1. Օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով~~(բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների)~~ սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից չկատարելը, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում~~ չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը~~՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը ~~երկու~~ հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը ~~երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը~~ մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:~~:~~

2. Սույն հոդվածի 1-ին~~առաջին~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն~~ազդեցությունը~~ օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկիչափով~~քսանապատիկից երեսնապատիկի~~ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից~~առավելագույնը երկու~~ հարյուր հիսուն ժամ տևողությամբ, ~~կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով~~ կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 508. ~~Հոդված 473.~~ Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը ~~դիտավորությամբ~~ չկատարելը

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերով~~Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշմամբ կամ պաշտպանական որոշմամբ~~ նախատեսված պահանջն~~պահանջները~~ ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից ~~դիտավորությամբ~~ չկատարելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը~~հնգապատիկից~~ տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ~~մեկից երկու~~ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի~~վեց ամիս~~ ժամկետով:

Հոդված 509. ~~Հոդված 474.~~ Արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարքը

1. Քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում արգելանքի տակ վերցված գույքի նկատմամբ ապօրինի արարքը, որը դրսևորվել է՝

1) գույքի մեկուսացվածությունը կամ նույնականացումն~~նույնականացումը~~ ապահովող և իրավասու անձի կողմից դրված կնիքը կամ կողպեքը ոչնչացնելով, վնասելով կամ այլ կերպ չեզոքացնելով,

2) գույքը յուրացնելով, օտարելով, թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, փոխելով, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով, այլ կերպ տնօրինելով կամ ապօրինի օգտագործելով այն անձի կողմից, որին~~ում~~ այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի կողմից, եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին,

3) գույքի պահպանման պարտականությունը չկատարելով այն անձի կողմից, որի~~ում~~ վրա դրված է եղել նման պարտականություն,

4) վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով կամ

5) գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ապօրինի եղանակով խուսափելով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի~~առավելագույնը տասնապատիկի~~ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից~~առավելագույնը~~ երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ~~առավելագույնը երեք~~ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք~~երկու~~ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 510. ~~Հոդված 475.~~ Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և~~,~~ գույքային իրավունքների կազմի~~,~~ ~~կամ~~ քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը~~,~~ հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ դրանում կեղծ տվյալներ~~տվյալ~~ ներկայացնելը

1. Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և~~կամ~~ գույքային իրավունքների կազմի~~,~~ ~~կամ~~ քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց ~~չարամտորեն~~ խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրում գույքի, գույքային իրավունքների կազմի~~,~~ ~~կամ~~ քանակի կամ գտնվելու վայրի մասին տվյալ թաքցնելը կամ~~վերաբերյալ~~ կեղծ տվյալ ներկայացնելը, որը~~ներկայացնել, ինչը~~ հանգեցրել է խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի~~տասնապատիկի~~ չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից ~~առավելագույնը երկու~~ հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու~~մեկ~~ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 511. ~~Հոդված 476.~~ Երաշխավորի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելը

1. Երաշխավորի կողմից ստանձնած պարտավորությունը~~պարտավորությունները~~ չկատարելը, որի հետևանքով մեղադրյալը չի կատարել իր վրա դրված պարտականությունը՝~~պարտականությունները~~

պատժվում է՝ տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից ~~առավելագույնը երկու~~ հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ~~որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ~~ ազատության սահմանափակմամբ՝

առավելագույնը երկուվեց տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկուվեց տարի ժամկետով:

Հոդված 512. Հոդված 477. Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող առարկաներառարկա պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, կրելը, կամ իրացնելը կամ այդպիսի առարկաներ փոխանցելը

1. Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից զենք, կտրող-ծակող կամ կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք, նյութ կամ առարկա պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, կրելը կամ իրացնելը կամ նրաննրանց այդպիսի առարկաառարկաներ փոխանցելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Հոդված 513. Ձերբակալվածներին կամՀոդված 478. Քրեակատարողական հիմնարկ, ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայր կամ քրեակատարողական հիմնարկ ապօրինաբար մուտք գործելը

1. Առանց համապատասխան թույլտվության կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ կատարող քրեակատարողական հիմնարկ, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայր կամ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկիցտուգանով՝ առավելագույնը երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր հիսուն ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեքառավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկուառավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Հոդված 514. Հոդված 479 . Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից մոլախաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը

1. Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից մոլախաղերի մասնակցելը՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ ~~ազատազրկում կատարող~~ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից ~~սույն հոդվածի առաջին մասով նախատեսված~~ մոլախաղեր կազմակերպելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու~~մեկից երեք~~ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածում և սույն օրենսգրքի 530~~495~~-րդ հոդվածում մոլախաղեր են~~մոլախաղ է~~ համարվում իր կամ այլ անձի համար գույք կամ ~~որևէ~~ այլ առավելություն ստանալու նպատակով ոչ իրավասու մարմնի կողմից կազմակերպված ցանկացած խաղերը~~խաղ~~:

Հոդված 515. ~~Հոդված 480.~~ Ձերբակալվածներին կամ~~ կալանավորվածներին պահելու վայրում կամ ազատազրկում կատարող~~ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից թմրամիջոցներթմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) ~~(հոգեմետ) նյութ~~ ապօրինի գործածելը՝

1. Ձերբակալվածներին կամ~~ կալանավորվածներին~~ պահելու վայրում կամ ~~ազատազրկում կատարող~~ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ կամ~~ (հոգեմետ) նյութեր, ինչպես նաև~~ դրանց պատրաստուկ~~ներ~~ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելը՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը~~ից~~ երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ~~երկու~~ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին~~առաջին~~ մասով նախատեսված արարքը~~հանցանքը~~, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու~~մեկից երեք~~ տարի ժամկետով:

~~3. Այն անձը, որն առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութեր, ինչպես նաև դրանց խառնուրդ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) գործածելու կապակցությամբ կամովին դիմել է բժշկական օգնություն ստանալու համար, ազատվում է սույն հոդվածով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվությունից:~~

~~Հոդված 481. Օրենքի ուժով կալանքի կիրառման անհնարինության դեպքում անձի կողմից իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելը~~

~~1.Օրենքի ուժով կալանքի կիրառման անհնարինության դեպքում անձի կողմից իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելը, եթե ավելի խիստ խափանման միջոց կիրառելը հնարավոր չէ՝~~

~~պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։~~

ԲԱԺԻՆ 15.
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 46
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 516. Հրամանը չկատարելը

1. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից,

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

4) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն բաժնում նախատեսված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը «Զինվորական

ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով զինծառայող համարվող անձն է (այսուհետ՝ զինծառայող):

5. Սույն բաժնում հրամանատար (պետ) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը, որը տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն:

6. Եթե զինծառայողն այլ անձի ապօրինի արարքի հետևանքով է ոչ իրավաչափորեն ձեռք բերել զինծառայողի կարգավիճակ, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն բաժնով նախատեսված հանցանքների կատարման համար:

Հոդված 517. Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով

1. Ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

3) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ

մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 518. Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ նրա պարտականությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ ծառայողական պարտականությունների կատարմանը խոչընդոտելը կամ այդ պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը, որը դրսևորվել է հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով կամ շանտաժով՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից կամ

2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 519. Հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ

3) առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի, սույն օրենսգրքի 520-րդ և 521-րդ հոդվածների իմաստով հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված, եթե այն կատարվել է երկու կամ ավելի զինծառայողների կողմից՝ անկախ հանցագործությունից տուժած անձի նկատմամբ ունեցած ստորադասության հարաբերությունից:

Հոդված 520. Ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ

3) առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 521. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում

1. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոն խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձին հարվածներ հասցնելով կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելով կամ պարբերաբար նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելով՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ

3) առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 522. Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական

պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ գինծառայողի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ կամ

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 523. Զինծառայողին ինքնասպանության հասցնելը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ կամ

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 524. Զինծառայողին վիրավորանք հասցնելը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ

ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) ստորադասի (ենթակայի) կողմից հրամանատարի (պետի) նկատմամբ,

2) հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ կամ

3) երկու կամ ավելի զինծառայողների նկատմամբ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 46 .
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 525. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալը

1. Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ յուրաքանչյուրը մեկ ժամից մինչև 72 ժամ տևողությամբ՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը կատարելը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով:

Հոդված 526. Դասալքությունը

1. Դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ նույն նպատակով ծառայության չներկայանալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրող զինծառայողի կողմից կամ

3) զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ եթե նա ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է զորամաս, ծառայության

վայր կամ իրավասու մարմին և պատրաստակամություն է հայտնել շարունակելու ծառայությունը:

Հոդված 527. Առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը

1. Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 528. Առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն

1. Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, և եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Հոդված 529. Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը

1. Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է նրա կողմից դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից կամ

2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն առաջացրել է մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ հանգեցրել է զորամասում անկարգությունների կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 530. Զինծառայողի կողմից մոլախաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը

1. Զինծառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլախաղերի մասնակցելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Զինծառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլախաղեր կազմակերպելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 531. Զինծառայողի կողմից թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) ապօրինի գործածելը կամ դրանք գործածած վիճակում ծառայության ներկայանալը

1. Զինծառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելը կամ դրանք գործածած վիճակում ծառայության ներկայանալը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 47 .
*ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հոդված 532. Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը

1. Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, ռադիոակտիվ նյութի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութի, սարքի կամ առարկայի հետ վարվելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ տվյալ առարկայի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 533. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը

1. Զինծառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելը, եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ տվյալ առարկայի ոչնչացում կամ վնասում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 534. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաները ոչնչացնելը կամ վնասելը

1. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան ոչնչացնելը կամ վնասելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 535. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ անզգուշությամբ առաջացրել է խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում,

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 536. Վստահված ռազմական գույքը հափշտակելը

1. Զինծառայողին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով անձնական կամ ծառայողական օգտագործման համար հանձնված համազգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկան կամ ռազմական այլ գույքը հափշտակելը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Զինծառայողին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով անձնական կամ ծառայողական օգտագործման համար հանձնված զենքը կամ ռազմամթերքը հափշտակելը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 537. Ծառայողական ռազմական գույքը կորցնելը

1. Զինծառայողի կողմից ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկական կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան կորցնելը, որը կատարվել է դրանց պահպանության կանոնի խախտմամբ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 538. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը

1. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 539. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոնները խախտելը

1. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 48 .
ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 540. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը

1. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոն խախտելը, եթե այդ արարքը կարող էր հանգեցնել պետության դեմ հարձակումը ժամանակին չհայտնաբերելուն կամ դրան չդիմակայելուն կամ եթե այդ արարքը հանգեցրել է մարտական հերթապահության կամ մարտական ծառայության կրման բնականոն ընթացքի խաթարման՝

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ

3) զենքով՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելը, եթե այն հանգեցրել է պետության դեմ հարձակումը ժամանակին չհայտնաբերելուն կամ դրան չդիմակայելուն (եթե բացակայում են այլ հանցագործության հատկանիշները)՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ կամ 5-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 541. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը

1. Սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից սահմանապահ ծառայություն կրելու կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում կամ սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն կամ եթե անզգուշությամբ հանգեցրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն կամ խոշոր չափերի գույքային վնասի կամ այլ էական վնասի՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելը, որը՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում կամ սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն (եթե բացակայում են այլ հանցագործության հատկանիշները)՝

պատժվում է՝ ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 542. Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը

1. Պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձի կողմից պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ անզգուշությամբ հանգեցրել է պահպանվող օբյեկտի ոչնչացման կամ վնասման, պահպանվող օբյեկտից հափշտակության կամ այլ ծանր հետևանքի՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 543. Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը

1. Զորամասի օրվա վերակարգի մեջ մտնող անձի կողմից (բացի պահակախմբի և պարեկախմբի կազմի մեջ մտնող անձից) ներքին ծառայության կանոնագրքային կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ հանգեցրել է զորամասի տարածքում իրավախախտման, օրվա վերակարգի խափանման, ռազմական միջոցառման կամ մարտական առաջադրանքի խափանման կամ զորամասի տարածքից հափշտակության՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Հոդված 544. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգությունն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը

1. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգությունն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոն խախտելը հասարակական կարգի պահպանության կամ հասարակական անվտանգության ապահովման վերակարգի մեջ մտնող զինծառայողի կողմից, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում, հասարակական կարգի խախտում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա կամ այլ կազմակերպության գործունեության կազմալուծում, զանգվածային անկարգություններ, առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում կամ պատերազմի ժամանակ կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 545. Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը

1. Առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու հրամանատարի (պետի) կողմից ամրությունը, մարտական տեխնիկան կամ մարտ վարելու այլ միջոցը հակառակորդին հանձնելը կամ թողնելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 546. Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը

1. Մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 547. Կամովին գերի հանձնվելը

1. Առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու կամովին գերի հանձնվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

Հոդված 548. Հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից

1. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամ այնպիսի այլ միջոցառումներին կամովին մասնակցելը, որոնք ակնհայտորեն կարող են վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետություններին, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

2. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից շահադիտական դրդումներով կամ իր նկատմամբ հակառակորդի ներողամիտ վերաբերմունքն ապահովելու նպատակով այնպիսի գործողություն կատարելը, որն ուղղված է մյուս ռազմագերիների իրավունքների կամ օրինական շահերի դեմ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից մյուս ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելը կամ ավագի դիրքում գտնվող ռազմագերու կողմից նրանց հետ դաժանորեն վարվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 49 .
ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը

1. Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն առաջացրել է հանցանքի կամ այլ իրավախախտման պարտակում կամ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության

իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

4) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:

Հոդված 550. Զինվորական պաշտոնեական անփութությունը

1. Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:

ԲԱԺԻՆ 16.
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 50 .
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՆԵՐ

Հոդված 551. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենսգրքով նախատեսված՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենսգրքով նախատեսված՝ ազատության սահմանափակում պատժատեսակի վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:

4. Սույն օրենսգրքով նախատեսված՝ կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակի վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան

կարգապահական գումարտակներն ստեղծելուց և դրանք շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

5. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքով կարող են սահմանվել սույն օրենսգրքով նախատեսված առանձին իրավահարաբերությունների ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ:

Հոդված 552. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելը

1. Սույն օրենսգիրքը գործողության մեջ է դրվում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքով:

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքի

ՑԱՆԿ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 218. Ընտրակաշառք ստանալը
Հոդված 219. Ընտրակաշառք տալը
Հոդված 220. Ընտրակաշառքի միջնորդությունը

Հոդված 231. Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը

Հոդված 232. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով

չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը

Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը

Հոդված 255. 2-րդ մաս, 2-րդ կետ. Խարդախությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 256. 2-րդ մաս, 2-րդ կետ. Վստահված գույքը հափշտակելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 258. 2-րդ մաս, 9-րդ կետ. Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 268. 3-րդ մաս, 2-րդ կետ. Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը

Հոդված 269. 3-րդ մաս, 3-րդ կետ. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը

Հոդված 272. Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը

Հոդված 273. Մասնավոր ոլորտում կաշառք տալը

Հոդված 274. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ

մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը

Հոդված 275. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցին կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը

.

Հոդված 276. Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը

Հոդված 277. Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը

Հոդված 282. 2-րդ մաս, 1-ին կետ. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 284. 2-րդ մաս, 2-րդ կետ. Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 296. Փողերի լվացումը

Հոդված 435. Կաշառք ստանալը.

Հոդված 436. Կաշառք տալը.

Հոդված 437. Կաշառքի միջնորդությունը.

Հոդված 438. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը

Հոդված 439. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը.

Հոդված 440. Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք՝ ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը

Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը

Հոդված 442. Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

Հոդված 443. Ապօրինի հարստանալը

Հոդված 444. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը

Հոդված 445. Պաշտոնեական կեղծիքը

Հոդված 477. Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան

Հոդված 480. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը

Հոդված 481. Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը

Հոդված 482. Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը

Հոդված 486. 2-րդ մաս, 2-րդ կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը խոչընդոտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.

Հոդված 496. Դատավարության մասնակիցներին՝ նրանց լիազորությունների հետ կապված կաշառք տալը

Հոդված 497. Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը

Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը

~~**Հոդված 482. Հրամանը չկատարելը**~~

~~1. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որի հետևանքով մարդու առողջությանը անզգուշությամբ թեթև կամ միջին ծանրության վնաս է պատճառվել կամ որը հանգեցրել է առաջադրանքի խափանման, ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման, կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին՝~~

~~պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է՝~~

~~1) մի խումբ անձանց կողմից կամ~~

~~2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:~~

~~3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ~~

վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով։

4. Սույն բաժնում նախատեսված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձն է կամ վարժական հավաքներ անցնող զինապարտը (այսուհետ՝ զինծառայող), ինչպես նաև այն անձը, ով միջազգային իրավունքի նորմերի համաձայն համարվում է ռազմագերի։

5. Սույն բաժնում հրամանատար (պետ) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը, որը տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն։

Հոդված 483. Հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով

1. Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անզգուշությամբ առաջացրել է առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

3. Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական կամ այլ առաջադրանքի կամ ռազմական միջոցառումների կամ զորավարժությունների խափանում ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով։

~~Հոդված 484. Պետին դիմադրելը կամ նրա օրինական գործառույթների իրականացմանը խոչընդոտելը~~

~~1. Պետին դիմադրելը կամ ծառայողական որևէ պարտականության կատարմանը խոչընդոտելը կամ այդ պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը, որը դրսևորվել է պետի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ պետի, նրա մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով կամ շանտաժով՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ, կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է՝~~

~~1) մի խումբ անձանց կողմից ,~~

~~2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ~~

~~3) պետի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։~~

~~3.Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով։~~

~~4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք կատարելը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով։~~

~~5. Սույն օրենսգրքի 484-րդ, 485-րդ, 486-րդ, 487-րդ հոդվածների իմաստով հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված, եթե այն կատարվել է երկու կամ ավելի զինծառայողների կողմից, անկախ հանցագործությունից տուժած անձի նկատմամբ ունեցած ստորադասության հարաբերությունից։~~

~~Հոդված 485. Պետի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը~~

~~1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում պետի նկատմամբ բռնություն գործադրելը կամ պետի կամ նրա մերձավորի նկատմամբ դա գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ՝~~

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք կատարելը՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից կամ

3) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, կամ

5) առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ կամ հինգերորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 486. Ստորադասի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասի նկատմամբ բռնություն գործադրելը կամ ստորադասի կամ նրա մերձավորի նկատմամբ դա գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականություն կատարելու հետ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք, կատարելը՝

1) մի խումբ անձանց կողմից կամ

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

3) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, կամ

4) առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որը անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս է պատճառել.

պատժվում է ազատազրկմամբ երեքից ութ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ հինգից տարի ժամկետով:

7 Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ կամ հինգերորդ մասով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 487. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում

1. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային որևէ կանոն խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից,

3) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, կամ

4) առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

5) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք կատարելը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, կամ

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

~~Հոդված 488. Զինծառայողին ռազմիկնքնապպանությ ան հասցնել ը~~

~~1. Բռնության, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը նվաստացնելու ճանապարհով զինծառայողին ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով,~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝~~

~~1) մի խումբ անձանց կողմից,~~

~~2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,~~

~~3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում,~~

~~պատժվում է ազատազրկմամբ հինգից տասը տարի ժամկետով~~

~~3. Սույն հոդվածիով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով։~~

~~Հոդված 489. Զինծառայողին վիրավորանք հասցնելը~~

~~1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով։~~

~~2. Նույն արարքը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ,~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։~~

~~ԳԼՈՒԽ 47.~~

~~ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~

~~Հոդված 490. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալը~~

1. Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը յոթանասուն երկու ժամից ավելի, բայց երկու հարյուր քառասուն ժամից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ յուրաքանչյուրը մեկ ժամից մինչև յոթանասուն երկու ժամ տևողությամբ՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված հանցանք կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին, երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված որևէ հանցանք կատարելը

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) վստահված զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ կամ չորրորդ մասերով նախատեսված հանցանքները ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված հանցանքը կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով և նախկինում նշված հիմքով չի ազատվել քրեական պատասխանատվությունից:

Հոդված 491. Դասալքությունը

1. Դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Դասալքությունը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Դասալքությունը, որը կատարվել է

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) վստահված զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Դասալքությունը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով կամ երրորդ մասի առաջին կետով նախատեսված հանցանքն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով, կամ եթե նա ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է զորամաս, ծառայության վայր, իրավապահ կամ պետական այլ մարմիններ և պատրաստակամություն է հայտնել շարունակելու ծառայությունը:

Հոդված 492. Առողջությանը վնաս պատճառելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը

1. Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու, հիվանդության սիմուլյացիայի կամ կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության կամ այլ ապօրինի եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանք կատարելը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածով նախատեսված որևէ հանցանքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

~~Հոդված 493. Զինվորական ծառայության պարտականությունները չկատարելը կամ դրանց կատարումից հրաժարվելը~~

~~1. Զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց զինծառայողի հրաժարվելը, որը զուգորդվել է տվյալ զինծառայողի կողմից դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ՝~~

~~պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։~~

~~2. Նույն արարքը, որը կատարվել է~~

~~1) մի խումբ անձանց կողմից, կամ~~

~~1) սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։~~

~~3. Նույն արարքը, որն առաջացրել է մարտական առաջադրանքի խափանում կամ հանգեցրել է զորամասում անկարգությունների կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։~~

~~4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով։~~

~~Հոդված 494. Զինծառայողի կողմից մոլախաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը~~

~~1. Զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլախաղերի մասնակցելը՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված մոլախաղեր կազմակերպելը՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով։~~

Հոդված 495. Զինծառայողի կողմից թմրամիջոց կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութ, ինչպես նաև դրանց խառնուրդ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելը

1. Զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում թմրամիջոց կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութ, ինչպես նաև դրանց խառնուրդ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մինչև երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Այն զինծառայողը, որն առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութեր, ինչպես նաև դրանց խառնուրդ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) գործածելու կապակցությամբ կամովին դիմել է բժշկական օգնություն ստանալու համար, ազատվում է սույն հոդվածով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվությունից:

ԳԼՈՒԽ 48.

ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԿԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 496. Զենքի, ռազմամթերքի կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը

1. Զենքի, ռազմամթերքի, ռադիոակտիվ, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է խոշոր գույքային վնաս կամ ռազմական տեխնիկայի ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով։

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանք կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։

4. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանք կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով։

Հոդված 497. Զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը

1.Զինծառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերը, պայթուցիկ կամ շրջապատի համար մեծ վտանգ ներկայացնող այլ սարքերը և առարկաները սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելը, եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ նշված առարկաների ոչնչացում կամ վնասում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով։

Հոդված 498. Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։

2. Նույն հանցանքը, որն անզգուշությամբ առաջացրել է միջին ծանրության վնասի պատճառում կամ առաջադրանքի խափանում կամ առանձնապես խոշոր չափի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված հանցանքը, որը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս կամ կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով։

Հոդված 499. Ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացրել է առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ մարտական առաջադրանքի խափանում կամ առանձնապես խոշոր չափի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով։

Հոդված 500. Ծառայողական ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը

1. Զինծառայողի կողմից ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը կամ ռազմական այլ գույքն անզգուշությամբ կորցնելը կամ փչացնելը, որը կատարվել է դրանց պահպանության կանոնների խախտմամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից քսանապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։

2. Նույն հանցանքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։

Հոդված 501. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը

1. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս կամ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 502. Թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը

1. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման որևէ կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման որևէ կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

3. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման որևէ կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 49.
ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

~~Հոդված 503. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը~~

~~1. Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը կարող էր հանգեցնել պետության դեմ հարձակումը ժամանակին չհայտնաբերելուն կամ եթե այդ արարքը վնաս է պատճառել մարտական հերթապահության կրման բնականոն ընթացքին կամ անզգուշությամբ հանգեցրել է անձի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելուն կամ խոշոր չափերի գույքային վնասի կամ այլ ծանր հետևանքի՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը անզգուշությամբ հանգեցրել է մարդու մահվան կամ առողջությանը ծանր վնաս՝~~

~~պատժվում է՝ ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով։~~

~~3. Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը հանգեցրել է պետության դեմ հարձակումը ժամանակին չհայտնաբերելուն (եթե բացակայում են այլ հանցագործության հատկանիշները) կամ դիտավորությամբ անձի առողջությանը պատճառել է թեթև կամ միջին ծանրության վնաս կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով։~~

~~4. Սույն հոդվածի առաջին, երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված հանցանքները ռազմական դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում կամ մարտական առաջադրանք իրականացնելիս կատարելը՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով։~~

~~Հոդված 504. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը~~

~~1. Սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում, սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն կամ անզգուշությամբ հանգեցրել է անձի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելուն կամ խոշոր չափերի գույքային վնասի կամ այլ ծանր հետևանքի՝~~

~~պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով։~~

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը անզգուշությամբ հանգեցրել է մարդու մահվան կամ առողջությանը ծանր վնաս պատճառելուն՝

պատժվում է՝ ազատազրկման երեքից վեց տարի ժամկետով:

3. Սահմանապահի վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահի ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից սահմանապահի ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում, սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն (եթե բացակայում են այլ հանցագործության հատկանիշները) կամ անձի առողջությանը վնաս պատճառելուն կամ խոշոր չափերի գույքային վնասի կամ այլ ծանր հետևանքի՝

պատժվում է՝ ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված հանցանքները ռազմական դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում կամ մարտական առաջադրանք իրականացնելիս կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 505. Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը

1. Պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձի կողմից պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը, եթե այդ արարքը անզգուշությամբ հանգեցրել է պահպանվող օբյեկտի ոչնչացման կամ վնասման, պահպանվող օբյեկտից հափշտակության, կամ այլ ծանր հետևանքների՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարելը կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Հոդված 506. Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը

1. Զորամասի օրվա վերակարգի մեջ մտնող անձի կողմից (բացի պահակախմբից և պարեկախմբից) ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ հանգեցրել է զորամասի տարածքում իրավախախտումների, օրվա վերակարգի խափանման, ռազմական միջոցառումների կամ առաջադրանքների

խափանման, զորամասի տարածքից հափշտակության կամ այլ ծանր հետևանքի՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով։

Հոդված 507. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը

1. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը հասարակական կարգի պահպանության կամ հասարակական անվտանգության ապահովման վերակարգի մեջ մտնող զինծառայողի կողմից, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնասի պատճառում, մարդու իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի ոտնահարում, հասարակական կարգի խախտում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում, պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց կամ այլ կազմակերպությունների գործունեության կազմալուծում, զանգվածային անկարգություններ կամ առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով։

3. Սույն հոդվածով նախատեսված հանցանքը, որը կատարվել է արտակարգ դրության, ռազմական դրության պայմաններում կամ պատերազմի ժամանակ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով։

Հոդված 508. Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը

1.Պետի կողմից առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու՝ ամրությունները, մարտական տեխնիկան և մարտ վարելու այլ միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով։

Հոդված 509. Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը

1. Մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով։

2. Նույն հանցանքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով։

Հոդված 510. Կամովին գերի հանձնվելը

1.Առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու կամովին գերի հանձնվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով։

Հոդված 511. Հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից

1. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամ այնպիսի այլ միջոցառումներին կամովին մասնակցելը, որոնք ակնհայտորեն կարող են վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետություններին, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով։

2. Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից շահադիտական դրդումներով կամ իր նկատմամբ հակառակորդի ներողամիտ վերաբերմունքն ապահովելու նպատակով այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ուղղված են մյուս ռազմագերիների իրավունքների կամ օրինական շահերի դեմ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։

3.–Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից մյուս ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելը կամ ավազակի դիրքում գտնվող ռազմագերու կողմից նրանց հետ դաժանորեն վարվելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով։

~~ԳԼՈՒԽ 50.~~

~~ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~

~~Հոդված 512. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը~~

~~1. Պետի կամ պաշտոնատար անձի կողմից կողմից իր իշխանությունը կամ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունը կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, կամ իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր լիազորություններից չբխող արարք կատարելը, որն առաջացրել է մարդու իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի ոտնահարում, հասարակական կարգի խախտում, հանցագործությունների կամ այլ իրավախախտումների պարտակում, առաջադրանքի խափանում կամ խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին կամ առաջացրել է համարժեք այլ հետևանքներ՝~~

~~պատժվում են զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք~~

~~1) կատարվել են բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,~~

~~2) մի խումբ պետերի կամ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ~~

~~3) անզգուշությամբ առաջացրել են մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների խափանում կամ այլ ծանր հետևանք կամ կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝~~

~~պատժվում են ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով։~~

~~Հոդված 513. Զինվորական պաշտոնեական անփութությունը~~

1. Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու կամ քաղաքացու իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի ոտնահարում, հասարակական կարգի խախտում, հանցագործությունների կամ այլ իրավախախտումների պարտակում, առաջադրանքի խափանում կամ նման այլ հետևանքներ կամ խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի, կազմակերպության, հասարակության կամ պետության շահերին՝

պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների խափանում կամ այլ ծանր հետևանք կամ կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով։

~~ԲԱԺԻՆ 16.~~
~~ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ~~

~~ԳԼՈՒԽ 51.~~
~~ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ~~

~~Հոդված 514. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելը~~

~~1. Սույն օրենսգիրքը գործողության մեջ է դրվում հատուկ օրենքով:~~

~~Հավել ված N 1~~
~~Հայաստանի Հանրապետության~~
~~քրեական օրենսգրքի~~

~~ՑԱՆԿ~~

~~ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ~~

~~**Հոդված 213. Ընտրակաշառք ստանալը.**~~
~~**Հոդված 214. Ընտրակաշառք տալը.**~~
~~**Հոդված 215.** Բարեգործության հետ միաժամանակ քարոզչություն իրականացնելը.~~

~~Հոդված **240. 2-րդ մաս,** 3**-րդ կետ. Խարդախությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով~~:
~~**3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով**~~

~~**Հոդված 241. 2-րդ մաս, 2-րդ կետ. Վստահված գույքը հափշտակելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,**~~
~~**3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով**~~

~~**Հոդված 243. 2-րդ մաս,** 4**-րդ կետ.** շորթումը՝ **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով**~~.
~~3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով~~

~~**Հոդված 257.** Մասնավոր ոլորտում կաշառք տալը.~~

~~**Հոդված 258. Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը.**~~

~~Հոդված 259. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցին, կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին, կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը.~~

~~Հոդված 260. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի, կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի, կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը.~~

~~Հոդված 261. Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն պահանջելը.~~

~~Հոդված 262. Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը.~~

~~Հոդված 267.~~ 2-րդ մաս, 3-րդ կետ Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.
~~3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով~~

~~Հոդված 269. 2-րդ մաս, 2-րդ կետ. Տնտեսական մրցակցության սահմանված կարգը խախտելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.~~
~~3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով~~

~~Հոդված 281. Փողերի լվացումը.~~

~~Հոդված 413. Կաշառք ստանալը.~~

~~Հոդված 414. Կաշառք տալը.~~

~~Հոդված 415. Կաշառքի միջնորդությունը.~~

~~Հոդված 416. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն ստանալը.~~

~~Հոդված 417. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը.~~

~~Հոդված 418. Կաշառքի, ապօրինի վարձատրության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը~~

~~Հոդված 419. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանությունը, լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը.~~

~~Հոդված 420. Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ ապօրինի զբաղվելը.~~

~~Հոդված 421. Ապօրինի հարստանալը.~~

~~Հոդված 422. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագիր չներկայացնելը.~~

~~Հոդված 423. Պաշտոնեական կեղծիքը.~~

~~Հոդված 458. 2-րդ մաս, 1-ին կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը խոչընդոտելը,~~ որը ~~կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.~~
~~3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.~~

~~Հոդված 512. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը:~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 23. Մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում

1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: Մրցակցություն սկզբունքից շեղում թույլատրվում է համաձայնեցման և համագործակցության վարույթներում:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

6. Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր:

7. Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: Վճռաբեկ դատարանում գործի քննությանը ներկա գտնվելու իրավունք ունի բողոք բերած անձը:

8. Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է: Դատարանում քրեական գործի քննությանը մեղադրանքի կողմը ներկայացնում է մեղադրողը:

Հոդված 31. Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը

1. Քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝

1) հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ.

2) մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ.

3) մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից.

4) մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է.

5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին:

6) մեղադրյալի հետ կնքվել է միևչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

2. Քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը և դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:

3. Այս հիմքով գործի վարույթը կասեցնելու՝ դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարվում կամ մերժվում են դատարանի որոշմամբ, որը կայացման պահից տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

4. Քրեական գործով վարույթը կարող է կասեցվել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո:

5. Քրեական գործով վարույթը կասեցվում է՝ մինչև այն կասեցնելու հիմք ծառայած հանգամանքները վերացնելը: Դրանց վերացումից հետո այն վերսկսվում է դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ:

6. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացվելուց հետո:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է համագործակցությունը դադարեցվելուց կամ մեղադրյալի կողմից միջազգային համագործակցության վերաբերյալ համաձայնագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող փաստական տվյալներ ձեռք բերելուց հետո:

(31-րդ հոդվածը փոփ., խմբ. 10.06.14 ՀՕ-48-Ն)

Հոդված 53. Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում

1. Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

1) հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ.

2) *(կետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-129-Ն)*.

3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար.

3[1]) ստորագրել մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր.

4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ.

5) *(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)*

6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում:

2. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝

1) ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից.

2) ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում.

3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով.

4) անհրաժեշտության դեպքում քննչական բաժնի պետին գրավոր ցուցում տալ գործի քննությունը քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ցուցում տալ նախաքննություն իրականացնող տարբեր մարմինների քննչական բաժինների պետերին՝ այդ մարմինների քննիչներից ստեղծված քննչական խմբում ներառելու վերաբերյալ:

Հատուկ քննչական ծառայության քննիչները կարող են ներգրավվել միայն տվյալ ծառայությանը ենթակա քրեական գործերի քննության համար ստեղծված քննչական խմբերում.

5) լուծել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, ստորադաս դատախազին հայտնված բացարկի, ինչպես նաև վերջիններիս ինքնաբացարկի հարցերը.

6) հետաքննության մարմնին, քննիչին գրավոր ցուցումներ տալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ.

7) հսկող դատախազի որոշումների և ցուցումների վերաբերյալ քննիչի գրավոր առարկությունները ստանալու պահից յոթօրյա ժամկետում որոշմամբ մերժել այդ առարկությունները՝ հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը թողնելով ուժի մեջ, կամ վերացնել հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը՝ առարկությունը ճանաչելով հիմնավորված.

8) գործի քննության օրինականությունն ապահովելու նպատակով հսկողություն իրականացնող դատախազին տալ գրավոր ցուցումներ.

9) լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին.

10) հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում.

11) դիմել համապատասխան մարմիններ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորման հարցը լուծելու, քրեական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններով, եթե այդ անձինք քրեական գործով պետք է ներգրավվեն որպես մեղադրյալ.

12) վերադարձնել քրեական գործերը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումներով.

13) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի անօրինական կամ անհիմն որոշումները.

14) հաստատել մեղադրական եզրակացությունը, իսկ այն անձանց նկատմամբ քրեական գործերով, որոնք քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում կամ անմեղսունակ են դարձել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց հետո՝ եզրափակիչ որոշումը.

15) գործն ուղարկել դատարան՝ ըստ էության քննելու համար:

3. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև՝

1) *(կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն)*

2) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.

3) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին.

4) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ.

5) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.

6) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը.

7) հետաքննության մարմնին հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները.

8) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար.

9) դիմել դատարան՝ սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով.

10) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց.

11) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները:

4. Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում դատախազն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ:

(53-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, փոփ., խմբ. 22.02.07 ՀՕ-129-Ն, փոփ., խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, խմբ. 06.12.16 ՀՕ-214-Ն)

Հոդված 54. Դատախազի լիազորությունները քրեական գործը կամ նյութը դատարանում քննելիս

1. Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝
1) հայտնել բացարկներ.
2) հարուցել միջնորդություններ.
3) կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների հարուցած միջնորդությունների վերաբերյալ.
4) ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը.
5) մասնակցել գործի նյութերի հետազոտմանը.
6) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.
7) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.
8) պահանջել դատական նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարելու իր նշած հանգամանքների մասին.
9) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց.
10) դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկայով, իսկ վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին.
11) բողոքարկել դատարանի դատավճիռները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանի այլ որոշումներ.
12) օգտվել սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններից:
2. Դատարանի նիստին մասնակցող դատախազը պարտավոր է՝
1) ենթարկվել դատարանի նիստում սահմանված կարգ ու կանոնին և նախագահողի իրավաչափ կարգադրություններին.
1[1]) դիրքորոշում հայտնել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ.
2) կատարել սույն օրենսգրքով նախատեսված այլ պարտականություններ:
3. Դատարանի կողմից քրեական գործեր և դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազի մասնակցությունը պարտադիր է:
(54-րդ հոդվածը լրաց. 13.06.06 ՀՕ-67-Ն, փոփ. 16.01.18 ՀՕ-69-Ն)

Հոդված 65. Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

1. Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:
2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝
1) իմանալ՝ ինչում է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անհապաղ անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը.
2) արգելանքի վերցվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անհապաղ անվճար ստանալ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.
3) մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն.
4) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.
5) հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ.
6) տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, առերես հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ.
7) տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց.

8) իր միջնորդությամբ, հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին կամ հրաժարվել դրանց մասնակցելուց, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ.

9) արգելանքի վերցնելուց հետո անհապաղ, բացառությամբ սույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով իր ընտրած անձին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը տեղյակ պահել արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձին արգելանքի վերցնելու դեպքում նրան պահելու տեղի և հիմքերի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով արգելանքի վերցված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին իրավունք է վերապահված կապվելու համապատասխանորեն իր քաղաքացիության պետության կամ իր մշտական բնակության պետության համապատասխան ներկայացուցչի կամ այդպիսի կապ հաստատելու իրավասություն ունեցող այլ ներկայացուցչի հետ կամ այդ ներկայացուցչի կողմից իրեն այցելության, ապա արգելանքի վերցված անձի կողմից այդ իրավունքի իրականացման խնդրանքի դեպքում պետք է այն բավարարել.

10) քրեական գործին կցելու և հետազոտելու համար ներկայացնել նյութեր.

11) հայտնել բացարկներ.

12) հարուցել միջնորդություններ.

13) հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին.

14) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

15) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

16) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

16[1]) մինչև գործի դատաքննությունն սկսելը հանդես գալ համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդությամբ.~~16[1]) մինչև գործի դատաքննությունն սկսելը հանդես գալ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությամբ.~~

16[2]) հսկող դատախազին միջնորդել կիրառելու համագործակցության վարույթ.

17) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը, հանդես գալ ճառերով և ռեպլիկով.

18) դատական քննության ընթացքում հանդես գալ վերջին խոսքով.

19) քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման, իր նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին կայացված որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալ այդ որոշումների և մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման, հայցադիմումի պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը.

20) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

21) հետ վերցնել իր կամ իր պաշտպանի ներկայացրած բողոքը.

22) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

23) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

24) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

25) առարկել նախագահողի գործողությունների դեմ.

26) ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով անօրինական պատճառված վնասի հատուցումը:

3. Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

4. Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) լինելով կալանավորված՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել անձնական խուզարկության.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության.

5) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի իրավաչափ կարգադրություններին.

6) մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

7) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:

5. Մեղադրյալն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ:

6. Անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

(65-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, փոփ. 23.05.06 ՀՕ-104-Ն, լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, փոփ., խմբ. 16.01.18 ՀՕ-69-Ն)

Հոդված 69. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը

1. Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.

6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.

7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

9) կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.

10) ներկայացվել է համաձայնեցման կամ համագործակցության վարույթ կիրառելու միջնորդություն.~~10) դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.~~

11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:

2. Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի կողմից պաշտպան ունենալու ցանկություն հայտնելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում.

2) համապատասխանաբար՝ կասկածյալին ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) հիվանդությունը հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում.

4) մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) այդպիսի հանգամանքներ հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքում.

6) այդպիսի հանգամանքներ հայտնաբերելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 9-րդ կետով նախատեսված դեպքում.

7) միջնորդություն ներկայացնելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված դեպքում.

8) սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Պաշտպան ունենալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

4. Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

5. Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:

(69-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, փոփ, լրաց. 05.02.09 ՀՕ-45-Ն)

Հոդված 119. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹՆ ԱՎԱՐՏԵԼԻՍ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Դատարանի դատավճռում, ինչպես նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ իրեղեն ապացույցների հարցի լուծումը կատարվում է հետևյալ կանոնների պահպանմամբ՝

1) հանցագործության գործիքները, ինչպես նաև շրջանառությունից հանված առարկաները բռնագրավվում և հանձնվում են համապատասխան պետական հիմնարկներին, իսկ արժեք չներկայացնելու դեպքում՝ ոչնչացվում են.

2) արժեք չներկայացնող իրերը ոչնչացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ շահագրգռված անձանց միջնորդության դեպքում՝ կարող են հանձնվել նրանց.

3) դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին.

4) հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը.

5) իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերը պահվում են գործի հետ միասին՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում, կամ հանձնվում են շահագրգիռ կազմակերպություններին և քաղաքացիներին:

2. Համաձայնեցման և համագործակցության վարույթների կիրառման դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ միևչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

(119-րդ հոդվածը փոփ. 25.05.06 ՀՕ-91-Ն)

Հոդված 277. Գործը դատարան ուղարկելը

1. Հաստատելով մեղադրական եզրակացությունը՝ դատախազը գործն ուղարկում է այն դատարան, որին գործն ընդդատյա է: Համաձայնեցման վարույթ~~Դատական քննության արագացված կարգ~~ կիրառելու դեմ առարկելու դեպքում դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու հետ միաժամանակ նշում է նաև այդ մասին: Համագործակցության վարույթի դեպքում դատախազը գործը դատարան ուղարկելիս հարուցում է միջնորդություն համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին:

2. Գործը դատարան ուղարկելու մասին դատախազն անմիջապես տեղեկացնում է մեղադրյալին և պաշտպանին, տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին՝ պարզաբանելով, որ հետագայում նրանք իրավունք ունեն իրենց դիմումները և միջնորդություններն ուղարկել դատարան:

3. Միաժամանակ, դատախազը մեղադրյալին, իսկ միջնորդության դեպքում նաև պաշտպանին, տուժողին և դատավարության այլ պատշաճ մասնակիցներին ստորագրությամբ հանձնում է մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: Եթե մեղադրական եզրակացության մեջ կամ դրան կցված հավելվածներում կատարվել են փոփոխություններ, ապա մեղադրական եզրակացությունը ներկայացվում է միայն վերջին խմբագրությամբ: Եթե դատախազի որոշմամբ մեղադրական եզրակացությունը փոփոխվել է, ապա ներկայացվում է նաև դատախազի համապատասխան որոշման պատճենը:

4. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

(277-րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)

ԲԱԺԻՆ 9[1]

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 45[1]
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 375[1]. Համաձայնեցման վարույթ կիրառելու հիմքը

1. Դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության մեջ մեղադրվող ամբաստանյալի միջնորդության հիման վրա:

2. Ամբաստանյալը համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:

3. Մինչ դատաքննությունն սկսելը մեղադրողը կարող է փոխել համաձայնեցման վարույթի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը հաստատելիս իր հայտնած դիրքորոշումը:

4. Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե՝

1) ամբաստանյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայն չէ.

2) ամբաստանյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու.

3) ամբաստանյալը չի գիտակցում միջնորդության բնույթը կամ դրա հետևանքները.

4) առերևույթ հիմնավորվում է, որ միջնորդությունը ներկայացվել է ոչ կամավոր, այդ թվում՝ խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ այլ բռնության կամ սպառնալիքի կամ ոչ իրավաչափ խոստման ազդեցությամբ.

5) վարույթում ներգրավված մի քանի ամբաստանյալներից առնվազն մեկն առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ.

6) համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ փաստարկված առարկում է մեղադրողը.

7) առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ և համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը:

Հոդված 375[2]. Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդության լուծումը

1. Դատարանը բավարարում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, եթե առկա է սույն օրենսգրքի 375[1]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը, բացակայում են սույն օրենսգրքի 375[1]-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքները:

2. Ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կողմերի բանակցությունների համար սահմանում է առավելագույնը մեկամսյա ժամկետ:

3. Դատարանը համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը մերժում է որոշմամբ:

Հոդված 375[3]. Համաձայնության վերաբերյալ բանակցությունները

1. Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելուց հետո մեղադրողը համաձայնության գալու նպատակով բանակցություններ է սկսում ամբաստանյալի և նրա պաշտպանի հետ:

2. Այն դեպքում, երբ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, սակայն տուժողը չի առարկել համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ, մեղադրողը տուժողի համաձայնությամբ նրան ներգրավում է բանակցություններին: Տուժողը մասնակցում է միայն հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման բնույթի և չափի վերաբերյալ բանակցություններին: Պետությանը պատճառված վնասի դեպքում պետության անունից բանակցություններում հանդես է գալիս մեղադրողը:

3. Կողմերը բանակցում են հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման բնույթի և չափի, ամբաստանյալի նկատմամբ կիրառման ենթակա պատժի (պատժատեսակի և պատժաչափի), այն կրելու նպատակահարմարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով սահմանված՝ բռնագանձման ենթակա գույքի և դրա չափի վերաբերյալ, եթե այդպիսին առկա է:

4. Բանակցությունների արդյունքում կողմերը պետք է համաձայնության գան հատուցման ենթակա վնասի բնույթի և չափի, ամբաստանյալի նկատմամբ կիրառման ենթակա պատժի (պատժատեսակի և պատժաչափի) ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցի շուրջ:

5. Բանակցությունների արդյունքում կողմերը կարող են համաձայնության գալ բռնագանձման ենթակա գույքի և դրա չափի շուրջ:

6. Բանակցությունների արդյունքում համաձայնության գալու դեպքում կողմերը կազմում են համաձայնության մասին արձանագրություն, որում նշվում են՝

1) արձանագրությունը կազմելու տեղը և ժամանակը.

2) մեղադրողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

3) ամբաստանյալի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, ամիսը, օրը և ծննդավայրը, բնակության հասցեն, քաղաքացիությունը, կրթությունը, մայրենի լեզուն, աշխատանքի կամ ուսման վայրը, ամբաստանյալի մոտ դատվածության առկայությունը, ինչպես նաև այլ վերաբերելի տեղեկություններ.

4) պաշտպանի անունը և ազգանունը.

5) տուժողի անունը և ազգանունը, եթե տուժողը մասնակցել է համաձայնության կայացմանը.

6) ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը և դրա կիրառման ժամկետը.

7) ամբաստանյալին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը և արարքի իրավական գնահատականը.

8) հատուցված կամ հատուցման ենթակա վնասի բնույթը և չափը, եթե այդպիսին առկա է եղել .

9) համաձայնեցված պատիժը (պատժատեսակը և պատժաչափը)՝ ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցը.

10) բռնագանձման ենթակա գույքը և դրա չափը, եթե այդ հարցերի շուրջ կողմերը եկել են համաձայնության:

7. Բանակցություններին մեկից ավելի ամբաստանյալների մասնակցության դեպքում նրանցից յուրաքանչյուրի հետ կնքվում է առանձին համաձայնություն:

8. Հանցագործությունների համակցության դեպքում արձանագրության մեջ առանձին նշվում են յուրաքանչյուր հանցագործության համար համաձայնեցված պատժի տեսակը և չափը, ինչպես նաև վերջնական պատժի տեսակը և չափը: Բանակցությունների արդյունքում համաձայնեցված պատիժը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված պահանջներին:

9. Համաձայնությունը համարվում է կնքված կողմերի կողմից համաձայնության մասին արձանագրությունը ստորագրելու պահից:

10. Համաձայնության մասին արձանագրության մեկական օրինակ մեղադրողը հանձնում է դատարանին և բանակցությունների մյուս մասնակիցներին:

11. Սույն հոդվածի 4-րդ մասում սահմանված հարցերի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում դատարանը գործի քննությունը շարունակում է ընդհանուր կարգով:

Հոդված 375[4]. Համաձայնության մասին արձանագրությունը ստանալուց հետո դատարանի գործողությունները

1. Համաձայնեցման վարույթով գործի քննությունն անցկացվում է սույն օրենսգրքի 41-րդ, 42-րդ և 45-րդ գլուխներով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն գլխի պահանջները:

2. Համաձայնության մասին արձանագրությունն ընդունելուց հետո դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին:

3. Եթե համաձայնության մասին արձանագրությունը չի համապատասխանում օրենքով սահմանված վերաբերելի պահանջներին, դատարանը, մատնանշելով թերությունները, համաձայնության մասին արձանագրությունը որոշմամբ վերադարձնում է կողմերին՝ սահմանելով թերությունները վերացնելու մինչև տասնհինգօրյա ժամկետ:

4. Դատարանը որոշմամբ չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և ընդհանուր կարգով շարունակում է գործի քննությունը, եթե՝

1) ամբաստանյալին մեղսագրվող արարքը ակնհայտորեն կատարվել է ամբաստանյալ չհանդիսացող այլ անձի կողմից,

2) ամբաստանյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին,

3) դատարանի սահմանած ժամկետում չեն վերացվում համաձայնության մասին արձանագրությունը վերադարձնելու մասին որոշմամբ նշված թերությունները կամ կրկին ներկայացվելու դեպքում թույլ են տրվում նոր թերություններ:

Հոդված 375[5]. Համաձայնեցման վարույթով դատաքննությունը

1. Հատուկ կարգով դատաքննությունն անցկացվում է ամբաստանյալի, նրա պաշտպանի, մեղադրողի, իսկ բանակցություններին մասնակցելու դեպքում՝ նաև տուժողի պարտադիր մասնակցությամբ:

2. Դատաքննությունն սկսվում է մեղադրողի կողմից համաձայնության մասին արձանագրության հրապարակմամբ:

3. Համաձայնության մասին արձանագրության հրապարակումից հետո դատարանն ամբաստանյալին հարցնում է, թե արդյոք նրան պարզ է կնքված համաձայնության բովանդակությունը և արդյոք նա համաձայն է դրա հետ: Այնուհետև դատարանը պարզում է, թե արդյոք ամբաստանյալն արտահայտել է իր իրական կամքը, գիտակցում է կնքված համաձայնության հետևանքները, պնդում է արդյոք կնքված համաձայնությունը և այն, որ համաձայնությունը չի կնքել բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ միջոցի ազդեցության հետևանքով:

4. Դատարանը պաշտպանին և մեղադրողին հարցնում է, թե արդյոք նրանք պնդում են կնքված համաձայնությունը:

5. Դատարանը տուժողին հարցնում է, թե արդյոք նա պնդում է կնքված համաձայնությունը՝ հատուցման ենթակա վնասի չափի մասով:

6. Եթե դատարանը պարզում է, որ համաձայնության մասին արձանագրությամբ ամբաստանյալը չի արտահայտել իր իրական կամքը, չի գիտակցել կնքված համաձայնության

հետևանքները, չի պնդում կնքված համաձայնությունը կամ չի պնդում, որ համաձայնությունը չի կնքվել բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ միջոցի ազդեցության հետևանքով, կամ եթե մինչև դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը կողմերից որևէ մեկը հրաժարվում է կնքված համաձայնությունից, ապա դատարանը որոշում է կայացնում գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին:

7. Համաձայնեցման մասին արձանագրությունը հետազոտելուց հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ նախապես հայտարարելով դատավճռի հրապարակման վայրը, տարին, օրը և ժամը:

Հոդված 375[6]. Համաձայնեցման վարույթով դատավճիռ կայացնելը

1. Համաձայնեցման վարույթի արդյունքում դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով կայացնում է մեղադրական դատավճիռ՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Մեղադրական դատավճիռը պարունակում է համաձայնության մասին արձանագրության տեքստի բառացի շարադրանքը:

3. Այն հարցերը, որոնք համաձայնեցվել են կողմերի միջև, մեղադրական դատավճռով դատարանը լուծում է՝ ըստ համաձայնության մասին արձանագրության:

4. Եթե առկա է քաղաքացիական հայց, ապա այն թողնվում է առանց քննության:

5. Սույն օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերն ամբաստանյալից բռնագանձման:

6. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է նաև դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 375[7]. Համաձայնեցման վարույթով դատավճռի բողոքարկման սահմանները

1. Սույն օրենսգրքի 375[6]-րդ հոդվածին համապատասխան կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով:

~~ԲԱԺԻՆ 9[1]~~

~~ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳ~~

~~ԳԼՈՒԽ 45[1]~~

~~ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐԱՔՍԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԻ ԿԱՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ~~

~~Հոդված 375[1]. Արագացված կարգի կիրառման հիմքերը~~

~~1. Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:~~

~~Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝~~

~~1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և~~

~~2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և~~

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին:
3. Դատարանը, գտնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:
Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Այս դեպքում դատարանն իր նախաձեռնությամբ սույն օրենսգրքի 309[4] հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով և ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը: Ամբաստանյալի կամ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:
Այն դեպքում, երբ տուժողը փաստարկված առարկում է դատարանում արագացված կարգ կիրառելու միջնորդության դեմ, ապա դատարանը կարող է որոշում կայացնել ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:
4. Դատարանը դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդությունը մերժելու դեպքում կայացնում է որոշում:
5. Միևնույն գործով մի քանի ամբաստանյալների կամ մեղադրյալների դեպքում, եթե նրանցից թեկուզ մեկն առարկում է դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ, ապա գործի քննությունը կատարվում է ընդհանուր կարգով:
6. Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:
Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:
(375[1] -ին հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, 21.03.18 ՀՕ-177-Ն)

Հոդված 375[2]. Միջնորդություն ներկայացնելու կարգը

1. Ամբաստանյալը (մեղադրյալը) դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:
2. Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ ամհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:
(375[2] -րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն)

Հոդված 375[3]. Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը

1. Արագացված կարգով դատական քննությունն անցկացվում է սույն օրենսգրքի 41, 42, 44 և 45 գլուխներով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի պահանջները:

~~2. Դատական քննությունն արագացված կարգով անցկացնելու մասին ամբաստանյալի միջնորդության քննությունը սկսվում է մեղադրողի կողմից ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ներկայացմամբ:~~

~~3. Դատավորը հարցեր է տալիս ամբաստանյալին համոզվելու համար՝ պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի այդպիսին), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:~~

~~4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են սույն օրենսգրքի 375[1] հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:~~

~~5. Դատարանը արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում: Սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:~~

~~6. Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը:~~

~~7. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքի 46 գլխով նախատեսված իրավունքը և կարգը:~~

~~8. Սույն օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերն ամբաստանյալից ենթակա չեն բռնագանձման:~~

~~*(375[3]-րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)*~~

~~**Հոդված 375[4]. Դատավճռի բողոքարկման սահմանները**~~

~~Դատավճիռը, որը կայացվել է սույն օրենսգրքի 375[3] հոդվածին համապատասխան, կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով, բացառությամբ սույն օրենսգրքի 395 հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքի:~~

~~*(375[4]-րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)*~~

~~*(բաժինը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն)*~~

ԳԼՈՒԽ 45[2]. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Հոդված 375[8]. Համագործակցության վարույթի նպատակը և կիրառելու հիմքը

1. Համագործակցության վարույթ կիրառվում է ծանր, առանձնապես ծանր, քրեական ենթամշակույթին առնչվող կամ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ապահովելու նպատակով:

2. Համագործակցության վարույթ կարող է նախաձեռնվել մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն (այսուհետ՝ համագործակցության միջնորդություն) ներկայացնելու դեպքում:

3. Հանցագործության մեջ մեղադրվող անձի կողմից համագործակցության միջնորդությունը պետք է վերաբերի իրեն վերագրվող հանցագործության ծանրությանը համարժեք կամ առավել ծանր այն հանցագործությանը, որն առնչվում է մեղադրվող անձին առաջադրված մեղադրանքին, և առերևույթ կատարվել է այլ անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Հանցագործության մեջ մեղադրվող անձի կողմից համագործակցության միջնորդությունը կարող է վերաբերել նաև իրեն վերագրվող հանցագործության ծանրությանը համարժեք կամ առավել ծանր՝ քրեական ենթամշակույթին առնչվող կամ կոռուպցիոն այն հանցագործությանը, որն առերևույթ կատարվել է իր կամ այլ անձի կողմից:

Հոդված 375[9]. Համագործակցության միջնորդություն ներկայացնելու կարգը

1. Համագործակցության միջնորդությունը ներկայացվում է հսկող դատախազին և ստորագրվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից:

2. Համագործակցության միջնորդությունը կարող է ներկայացվել անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը:

3. Համագործակցության միջնորդության մեջ նշվում է, որ մեղադրյալը համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքի հետ և այն, թե ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործության բացահայտումն ապահովելուն աջակցելու նպատակով:

4. Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե միջնորդությունը ներկայացնելու պահին մեղադրյալը պաշտպան չունի, ապա քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ քննարկել միջնորդությունը:

5. Մեղադրյալի և պաշտպանի կողմից ստորագրված միջնորդությունը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում քննիչն այն հանձնում է հսկող դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր դիրքորոշումը:

6. Նույն վարույթով մեկից ավելի մեղադրյալների կողմից մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր (այսուհետ՝ համագործակցության համաձայնագիր) կնքելու ցանկություն արտահայտելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է համագործակցության առանձին միջնորդություն:

Հոդված 375[10]. Համագործակցության միջնորդության լուծումը

1. Համագործակցության միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի դիրքորոշումն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում հսկող դատախազը որոշում է կայացնում համագործակցության միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

2. Համագործակցության միջնորդությունը մերժվում է, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի 375[8]-375[9]-րդ հոդվածներում սահմանված պայմաններին, կամ եթե հսկող դատախազը տվյալ համագործակցությունը համարում է ոչ անհրաժեշտ:

Հոդված 375[11]. Համագործակցության համաձայնագիր կազմելու կարգը

1. Համագործակցության միջնորդությունը բավարարելու դեպքում հսկող դատախազը մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ կազմում է համագործակցության համաձայնագիր:

2. Համագործակցության համաձայնագրի մեջ նշվում են՝

1) այն կազմելու տեղը և ժամանակը.

2) հսկող դատախազի անունը, ազգանունը և պաշտոնը.

3) մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, ամիսը, օրը և ծննդավայրը, քնակության հասցեն, քաղաքացիությունը, կրթությունը, աշխատանքի կամ ուսման վայրը, դատվածության առկայությունը, ինչպես նաև այլ վերաբերելի տեղեկություններ.

4) մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը և դրա ժամկետը.

5) պաշտպանի անունը, ազգանունը և վարույթին նրա մասնակցության հիմքը.

6) մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը և արարքի իրավական գնահատականը.

7) համագործակցության բնույթը և այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել համագործակցության նպատակին հասնելու համար.

8) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված պահանջներին համապատասխան համաձայնեցված պատիժը (պատժատեսակը և պատժաչափը)՝ ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցը.

9) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածով բռնագանձման ենթակա գույքը և դրա չափը, եթե այդպիսին առկա է ու դրա շուրջ ձեռք է բերվել համաձայնություն.

10) մեղադրյալի գրավոր տեղեկացումն այն մասին, որ համագործակցությունից հրաժարվելու դեպքում համագործակցության արդյունքում ստացված փաստական տվյալները կարող են օգտագործվել որպես ապացույց.

11) մեղադրյալի գրավոր հայտարարությունն այն մասին, որ համագործակցության համաձայնագիրը կնքում է կամավոր, գիտակցում է դրա բնույթն ու հետևանքները, համաձայնագրի կնքումը խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ այլ բռնության կամ սպառնալիքի կամ ոչ իրավաչափ խոստման ազդեցության արդյունք չէ:

3. Համագործակցության նպատակին հասնելու համար մեղադրյալի կողմից կատարվող գործողությունները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հանցակիցների բացահայտման, բռնագանձման ենթակա գույքի պատկանելիության, գտնվելու վայրի կամ դրա հնարավոր փոխակերպման վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ:

4. Եթե առկա է հանցագործությամբ պատճառված վնաս, որը հատուցված չէ համաձայնագիրը կնքելու պահին և որն առաջացել է միայն տվյալ մեղադրյալի գործողությունների արդյունքում, ապա համագործակցության համաձայնագրում նշվում է նաև այդ վնասը լրիվ հատուցելու մեղադրյալի պարտականությունը:

5. Եթե մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության դեպքում անհրաժեշտ է համապատասխան անձի նկատմամբ ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներ, ապա այդ մասին նշվում է համագործակցության համաձայնագրում:

6. Համագործակցության համաձայնագիրը ստորագրում են հսկող դատախազը, մեղադրյալը և պաշտպանը: Համագործակցության համաձայնագրի մեկական օրինակ հանձնվում է մեղադրյալին և պաշտպանին:

7. Համագործակցության համաձայնագիր կնքելու մասին մեկից ավելի մեղադրյալների միջնորդություններ բավարարելու դեպքում, հսկող դատախազը նրանցից յուրաքանչյուրի հետ կնքում է առանձին համաձայնագիր:

8. Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության ընթացքում համագործակցության համաձայնագիրը կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լրացվել՝ սույն հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ:

Հոդված 375[12]. Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը

1. Համագործակցության վարույթով նախաքննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված կանոնները:

2. Համագործակցության համաձայնագիր կազմելուց հետո տվյալ մեղադրյալի վերաբերյալ վարույթն անջատվում է: Անջատված վարույթի նյութերին պարտադիր կցվում են համագործակցության միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին հսկող դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիրը:

3. Մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության դեպքում քննիչը որոշում է կայացնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը կնքված փակ ծրարում պահելու, ինչպես նաև համապատասխան անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին:

4. Նախաքննության ավարտից հետո քննիչը, սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով, քրեական գործը հանձնում է հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդություն կազմելու համար:

Հոդված 375[13]. Համագործակցությունից հրաժարվելը

1. Մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը մեղադրյալն իրավունք ունի գրավոր դիմումով հրաժարվել համագործակցությունից: Այդ դեպքում հսկող դատախազի որոշմամբ համագործակցությունը դադարեցվում է, և քրեական գործով վարույթը շարունակվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Հոդված 375[14]. Համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությունը

1. Սույն օրենսգրքի 274-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հսկող դատախազը, ուսումնասիրելով քննիչից ստացած քրեական գործը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող փաստական տվյալները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և իրավասու դատարան միջնորդություն է հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին, կամ որոշմամբ մերժում է այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարանին հանձնելը, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ:

2. Միջնորդության մեջ նշվում են՝

1) մեղադրյալի համագործակցության բնույթն ու սահմանները.

2) հանցագործության բացահայտումն ապահովելու համար մեղադրյալի համագործակցության նշանակությունը.

3) մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող փաստական տվյալները.

4) համաձայնեցված պատիժը (պատժատեսակն ու պատժաչափը)՝ ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցը.

5) բռնագանձման ենթակա գույքը և դրա չափը, եթե այդպիսին առկա է ու դրա շուրջ ձեռք է բերվել համաձայնություն.

6) մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ նրա հետ կապված այլ անձի նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցները, դրանց հիմքերը և նպատակը:

3. Միջնորդության պատճենը հանձնվում է մեղադրյալին և նրա պաշտպանին, ովքեր իրավունք ունեն դրա վերաբերյալ իրենց նկատառումները ներկայացնել դատարանին:

4. Մեղադրյալին և պաշտպանին հանձնվում է մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ քրեական գործը դատարանին հանձնելը մերժելու մասին որոշումը, որը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում: Մինչև բողոքի լուծումը քրեական գործը չի կարող ուղարկվել դատարան:

Հոդված 375[15]. Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքը և պայմանները

1. Համագործակցության վարույթով գործի քննությունն անցկացվում է սույն օրենսգրքի 41-րդ, 42-րդ և 45-րդ գլուխներով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն գլխի պահանջները:

2. Դատարանը մինչև դատաքննությունն սկսելը քննարկում է համագործակցության համաձայնագիր կնքած ամբաստանյալի նկատմամբ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հարցը, եթե դատախազը քրեական գործը դատարանին հանձնելիս նման միջնորդություն է հարուցել:

3. Դատարանը բավարարում է դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդությունը, եթե համոզվում է, որ՝

1) համագործակցության համաձայնագիրն ամբաստանյալի կողմից կնքվել է կամավոր, նա գիտակցում է համաձայնագրի կնքման հետևանքները և պնդում է, որ համաձայնագիրը չի կնքել բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ միջոցի ազդեցության հետևանքով.

2) համագործակցության համաձայնագիրն ամբաստանյալի կողմից կնքվել է պաշտպանի մասնակցությամբ և սույն գլխով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ.

3) ամբաստանյալը համաձայն է իրեն առաջադրված մեղադրանքի հետ.

4) ներկայացվել են ամբաստանյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելու մասին առերևույթ բավարար փաստական տվյալներ.

5) ամբաստանյալի համագործակցությունը չի հանգել մինչև համագործակցությունն իրեն մեղսագրվող արարքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն.

6) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ ամբաստանյալին մեղսագրվող արարքը նա չի կատարել.

7) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ ամբաստանյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականը չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմաններից մեկի բացակայության դեպքում դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին:

5. Դատախազի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին:

Հոդված 375[16]. Համագործակցության վարույթով դատաքննությունը

1. Համագործակցության վարույթով հատուկ կարգով դատաքննությունն անցկացվում է ամբաստանյալի, նրա պաշտպանի, մեղադրողի և տուժողի պարտադիր մասնակցությամբ:

2. Դատաքննությունն սկսվում է մեղադրողի կողմից համագործակցության համաձայնագրի հրապարակմամբ: Մեղադրողը դատարանին ներկայացնում է ամբաստանյալի համագործակցության փաստը և պարզաբանում, թե հատկապես ինչում է դա արտահայտվել:

3. Ամբաստանյալը և պաշտպանն իրավունք ունեն իրենց նկատառումները հայտնել ամբաստանյալի համագործակցության բնույթի և այլ էական հանգամանքների վերաբերյալ:

4. Դատաքննության ընթացքում հետազոտվում են համագործակցության համաձայնագիրը և այն փաստական տվյալները, որոնք հաստատում են՝

1) ամբաստանյալի համագործակցության բնույթն ու սահմանները.

2) ամբաստանյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելը.

3) հանցագործության բացահայտումն ապահովելու գործում ամբաստանյալի հետ համագործակցության դերը և նշանակությունը.

4) համագործակցության արդյունքում ամբաստանյալի, նրա մերձավոր ազգականի կամ ամբաստանյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության սպառնալիքի աստիճանը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստական տվյալները հետազոտելուց հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ նախապես հայտարարելով դատավճռի հրապարակման վայրը, տարին, օրը և ժամը:

Հոդված 375[17]. Համագործակցության վարույթով դատավճիռ կայացնելը

1. Համագործակցության վարույթի արդյունքում դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով կայացնում է մեղադրական դատավճիռ՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Դատավճռում շարադրվում են՝

1) ամբաստանյալին մեղսագրվող հանցանքի փաստական նկարագրությունը և իրավական գնահատականը.

2) ամբաստանյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունները կատարելու վերաբերյալ դատարանի հետևությունները, ինչպես նաև այդ հետևությունները հաստատող փաստական տվյալները.

3) համագործակցության նպատակին հասնելու վերաբերյալ դատարանի հետևությունները, ինչպես նաև այդ հետևությունները հաստատող փաստական տվյալները:

3. Հետազոտված փաստական տվյալներով ամբաստանյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների կատարումը, ինչպես նաև համագործակցության նպատակին հասնելը հաստատված համարելու դեպքում դատարանը ամբաստանյալի նկատմամբ կայացնում է մեղադրական դատավճիռ: Այն հարցերը, որոնք համաձայնեցվել են կողմերի միջև, մեղադրական դատավճռով դատարանը լուծում է՝ ըստ համագործակցության համաձայնագրի:

4. Սույն օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերն ամբաստանյալից ենթակա չեն բռնագանձման:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքները չհաստատվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում գործի քննությունը վերսկսելու և ընդհանուր կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

6. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է նաև դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 375[18]. Համագործակցության վարույթով դատավճռի բողոքարկման սահմանները և դրա վերանայման առանձնահատկությունները

1. Համագործակցության վարույթով կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով:

2. Եթե ամբաստանյալի նկատմամբ սույն գլխի կանոններին համապատասխան կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվում է, որ նա քրեական հետապնդման մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն կամ խոչընդոտել է համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետագա քննությանը, ապա դատավճիռը ենթակա է վերանայման սույն օրենսգրքի 49[1]-րդ գլխով սահմանված կարգով:

Հոդված 376[1]. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

4[1]) առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

(376[1]-րդ հոդվածը լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, փոփ. 05.02.09 ՀՕ-45-Ն)

(376[1]-րդ հոդվածի 4-րդ կետն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչվել է Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին հակասող 06.11.19 ՍԴՈ-1487 որոշմամբ:

Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 15-ը:)

Հոդված 379. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում.

2) սույն օրենսգրքի 376[1] հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.

2.1) սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2.1-րդ կետով նախատեսված դեպքում՝ սույն օրենսգրքի 426.3 և 426.4 հոդվածներով սահմանված ժամկետներում.

3) առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

3[1]) առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում:

2. *(մասն ուժը կորցրել է 13.09.19 ՀՕ-155-Ն)*

(379-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց. 26.12.08 ՀՕ-237-Ն, փոփ. 13.09.19 ՀՕ-155-Ն)

(379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչվել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր 23.10.2018 ՍԴՈ-1431 որոշմամբ:)

Հոդված 385. Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները

1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45[1] և 45[2] գլուխների~~45[1] գլխի~~ կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է

այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

(385-րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն)

Հոդված 388. Վերաքննիչ դատարանում գործերի քննությունն սկսելու ժամկետները

1. Վերաքննիչ բողոքի հիման վրա ստացված գործերի քննությունը վերաքննիչ դատարանն սկսում է քրեական գործը կամ նյութը ստանալու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում: Հարգելի պատճառների առկայության դեպքում գործը քննող դատարանի որոշմամբ այդ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 10 օրով:

1[1]. Վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը սկսվում և ավարտվում է նյութը ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում: Հարգելի պատճառների առկայության դեպքում գործը քննող դատարանի որոշմամբ այդ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան հինգ օրով:

2. Վերաքննիչ դատարանը պարտավոր է գործը քննել և որոշում կայացնել ողջամիտ ժամկետում: Գործի քննության ողջամիտ ժամկետը որոշելիս հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը:

(388-րդ հոդվածը խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն)

Հոդված 390. Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը

1. Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, բացառությամբ վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի:

2. Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են:

3. Դատական նիստին պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) ամբաստանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, կամ երբ բողոք է բերել դատախազը՝ ոչ հօգուտ դատապարտյալի.

3) պաշտպանը՝ սույն օրենսգրքի 69 հոդվածով նախատեսված դեպքերում:

4. Դատավարության մյուս մասնակիցների չներկայանալը չի խոչընդոտում գործը քննելուն և դատական ակտ կայացնելուն:

4[1]. Վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

(390-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց. 24.06.20 ՀՕ-344-Ն)

(24.06.20 ՀՕ-344-Ն օրենքն ունի հոդվածին վերաբերող անցումային դրույթ)

Հոդված 414[1] Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը
(վերնագիրը խմբ. 10.06.14 ՀՕ-48-Ն)

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 407 հոդվածի պահանջներին:

2. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.

2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չուներ.

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) վճռաբեկ բողոք ներկայացրած անձը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել.

6) բողոքը բերվել է սույն օրենսգրքի 375.4 հոդվածի պահանջի խախտմամբ:

3. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին:

4. Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

4[1]. Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման իրավաչափության ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետի ընթացքում: Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ սահմանում է մինչև տասնհինգօրյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

(414[1]-րդ հոդվածը լրաց. 07.07.06 ՀՕ-152-Ն, փոփ., լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, փոփ. 26.12.08 ՀՕ-237-Ն, խմբ. 04.02.10 ՀՕ-23-Ն, 10.06.14 ՀՕ-48-Ն)

Հոդված 414[2] Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-211-Ն)

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը.

2) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ դատական սխալ են համարվում սույն օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված դեպքերը:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

5[1]. Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման իրավաչափության ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետի ընթացքում:

6. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկվում է դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) այն կայացնելու պահից երկշաբաթյա ժամկետում:

(414[2] -րդ հոդվածը լրաց. 07.07.06 ՀՕ-152-Ն, 21.02.07 ՀՕ-93-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց., խմբ., փոփ. 26.12.08 ՀՕ-237-Ն, խմբ. 10.06.14 ՀՕ-48-Ն, 23.03.18 ՀՕ-211-Ն)

Հոդված 414[3] Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը

(վերնագիրը խմբ. 10.06.14 ՀՕ-48-Ն)

1. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են սույն օրենսգրքի 414.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 414.2 հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից երեք ամսվա ընթացքում:

3[1]. Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման իրավաչափության ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետի ընթացքում:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության:

(414[3] -րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, 10.06.14 ՀՕ-48-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-211-Ն)

Հոդված 426[3]. Դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով

1. Նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են, եթե՝

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճռ կայացնելուն.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավորված և անօրինական դատավճիռ կամ գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

4) ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի

կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

5) համագործակցության վարույթով դատավճիռ կայացնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հիմնավորում են, որ համագործակցության համաձայնագիր կնքած անձը քրեական հետապնդման մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն կամ խոչընդոտել է համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետագա քննությանը:

2. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 4 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

3. Եթե վաղեմության ժամկետները լրանալու, համաներման մասին օրենք ընդունվելու կամ առանձին անձանց ներում շնորհելու պատճառով, ինչպես նաև մեղադրյալի մահվան հետևանքով դատական ակտ կայացնելն անհնարին է, ապա սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերում մատնանշված նոր երևան եկած հանգամանքները պարզվում են սույն օրենսգրքով նախատեսված կարգով կատարվող քննությամբ:

4. Արդարացման դատավճռի և գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

5. Այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ:

6. Դատապարտյալի մահը արգելք չէ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելուն՝ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով:

7. Սույն հոդվածի դրույթները կիրառելի են նաև այն քրեական գործերով, որոնցով դատավճիռ չի կայացվել:

(426[3]-րդ հոդվածը լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, փոփ. 26.12.08 ՀՕ-237-Ն, 01.11.18 ՀՕ-415-Ն)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 62. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները

1. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝

1) առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը.

2) հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը.

3) հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը.

4) պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը.

5) հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ կարեկցանքի շարժառիթով կատարելը.

6) հանցանքն անհրաժեշտ պաշտպանության, հանցանք կատարած անձին բռնելու, ծայրահեղ անհրաժեշտության, հիմնավորված ռիսկի, հրամանը կամ կարգադրությունը կատարելու իրավաչափության պայմանները խախտելով կատարելը.

7) տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը.

8) հանցանքը սպառնալիքի կամ հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելը.

9) մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը.

9.1) համագործակցության վարույթով մեղադրյալի կողմից իր կատարած այլ հանցագործությունը բացահայտելը.

10) հանցագործությունից անմիջապես հետո տուժողին բժշկական կամ այլ օգնություն ցույց տալը, հանցագործությամբ պատճառված գույքային և բարոյական վնասը կամովին հատուցելը կամ վերացնելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները:

2. Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում:

3. Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Հոդված 64. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը

1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

2.2. Համագործակցության վարույթ կիրառելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

3. Դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ, կամ կարող է նշանակվել համապատասխան հոդվածով նախատեսված մյուս պատժատեսակներից որևէ մեկը, սակայն տվյալ պատժատեսակի համար համապատասխան հոդվածով նախատեսված նվազագույն չափից ավելի ցածր չափով:

(64-րդ հոդվածը լրաց. 09.07.19 ՀՕ-124-Ն)

Հոդված 67[2]. Պատիժ նշանակելը համածայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում

1. Համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի առավելագույն չափի կամ ժամկետի երկու երրորդը: Եթե առավել խիստ պատժատեսակի երկու երրորդը փոքր է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա այն չի կարող պակաս լինել նվազագույն չափից կամ ժամկետից:

2. Չավարտված հանցագործություններով համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնը կիրառվում է չավարտված հանցագործության համար սույն օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված պատժի նշանակման կանոնները կիրառելուց հետո: Եթե հաշվարկի արդյունքում պատժաչափը պակաս է ստացվում չավարտված հանցագործության համար պատժի նշանակման կանոնների կիրառմամբ սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա նշանակվում է այն չափը կամ ժամկետը, որը ստացվել է հաշվարկի արդյունքում:

3. Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններով համագործակցության վարույթ կիրառելու դեպքում նշանակվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակը կամ սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում:

4. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով համագործակցության վարույթ կիրառելու դեպքում նշանակվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակի նվազագույն չափը կամ ժամկետը կամ սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ սանկցիայի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափը կամ ժամկետը կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում:

5. Սույն հոդվածով նախատեսված կանոններով պատժի նշանակման դեպքում սույն օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կանոնները կիրառելի չեն:

1. Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելիս սույն հոդվածով նախատեսված կանոնները կիրառելի են համակցության մեջ ընդգրկված յուրաքանչյուր հանցագործության համար առանձին:

Հոդված 75. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության

ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

4. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

4.1. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է նաև, եթե անձի հետ կնքվել է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է համագործակցությունը դադարեցվելու կամ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությունը դատարան ներկայացնելու պահից:

5. Վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել, լուծում է դատարանը: Եթե դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ապա ցմահ ազատազրկում չի կիրառվում:

6. Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

7. Սույն օրենսգրքի 132.2-րդ և 168-րդ հոդվածներով, ինչպես նաև անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից:

(75-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-103-Ն, լրաց. 12.11.13 ՀՕ-112-Ն)

Հոդված 103.1. Բռնագանձումը

1. Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, սույն օրենսգրքի 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության:

2. Սույն օրենսգրքի իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցավոր նպատակներով, ինչպես նաև այն անձը, որը գույքն այլ անձից ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով:

3. Այն դեպքում, երբ տուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագանձման ենթակա գույքի վերաբերյալ, այդ գույքի բռնագանձում կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

4. Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված դեպքերում նաև այդ հոդվածների իմաստով գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

5. Համաձայնության և համագործակցության վարույթների կիրառման դեպքում սույն հոդվածով սահմանված կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագանձման ենթակա գույքի կամ դրա չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, բացառությամբ շրջանառությունն արգելված կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքի, որը ենթակա է պարտադիր բռնագանձման՝ հօգուտ պետության: Բանակցությունների արդյունքում համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից:

(103.1-ին հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-114-Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-83-Ն)